

16071

29.85  
9.99



06 DEC 2

051.05-5  
7-99

ԲՈԼԵՍԼՈՒ ՊՐՈԽ

(Արևմտահայ Գլովացիկ)

ՄԱՆԿՈՒԹԵԱՆՍ  
ՄԵՂՔԵՐԸ

Հոպերանտօից թարգմ.

Ա. ՀԱԺԵԱՆ

ԹԻՖԼԻՑ  
Տպ. «Մամուլ», Խորխե-Մելիքեան փ., № 25.  
1918

391.85

Դ-39

ԲՈԼԵՍՈՒԱՐ ՊՐՈՒՅ

ՄԿ.

143

ՍԱՆԿՈՒԹԵԱՆՍ  
≡ ՄԵՂՔԵՐԸ



ՀԱՊԵՐԱՆՈՒՅՑ ԺԱՌՈՅ.

Ա. ՀԱԺԵԱՆ

ԲԻՑ ԷՒ Ց

Տար. Շահնշար, Լայբ-Մելիքան փ., և 22.

1918

ՀԱՅ  
ՀԱՅ

1002  
5804

# ՄԱՆԿՈՒԹԵԱՆՍ ՄԵՂՔԵՐԸ

## I

Յս ծնւեցի այն ժամանակները, երբ ամեն  
մարդ պէտք է մի մականուն ունենար, գուցէ և  
ոչ բոլորովին համապատասխան:

Հենց այդ պատճառով մեր կալւածատիրու-  
նուն անւանում էին «կոմսուհի», հօրս՝ նրա  
«լիազօրը», իսկ ինձ՝ շատ սակաւ կաղիա կամ  
կեսնիկովի, բայց բաւական յաճախ՝ չարաճճի—  
երբ ես գեռ տանն էի, և կամ աւանակ—երբ  
ես արդէն դպրոց էի յաճախում:

Որովհետեւ մեր կալւածատիրունու ազգա-  
նունը ապարդիւն կը լինէր վնարել արիստո-  
կրատական ընտանիքների անւանացուցակի մէջ,  
այդ պատճառով, ինձ թւում էր, որ նրա կոմ-  
սութեան թագի փայլը հանգուցեալ հօրս լիազօ-  
րութիւնից այն կողմ, աւելի հեռուն չէր տարած-  
ւում, նոյն իսկ ես յիշում եմ, որ «կոմսուհի»  
տիտղոսը կարծես մի յուշարձան էր, որով իմ  
հանգուցեալ հայրս յաւերժացրեց այն ուրախ  
օրը, երբ նրա ոռոճիկը աւելացրին տարեկան

100 լեհական Փլորինով \*): Մեր տիկինը լոռւթեամբ ընդունեց իրեն նւիրւած այդ տիսղուը. իսկ մի քանի օրից յետոյ հայրս աւելի առաջ գնաց, կալւածների կառավարչից դարձաւ լիազօր, և ստացաւ զիպլոմի փոխարէն մի ահագին խողի ձագ, որի վաճառումից յետոյ դնեցին ինձ համար իմ առաջին կօշիկները:

Հայրս, ես և քոյրս՝ Սօնիան (մայր արդէն ես չունէի) ապրում էինք մի քարաշէն պաշտօնաւան մէջ. Կոմսուհին ապրում էր պալատում իր փոքրիկ աղջիկ և իմ հասակակից Լօնիայի, նրա դաստիարակչուհու, պառաւ անտեսուհի Սալօմէի և մեծ քանակութեամբ սպասուհիների ու ծառայող օրիորդների հետ միասին:

Այդ օրիորդները ամբողջ օրը կար էին անում, որի պատճառով ես եղբակացնում էի, որ հարուստ տիկինները գոյութիւն ունեն միմիայն նրա համար, որ հագուստներ մաշեն, իսկ երիտասարդ օրիորդները՝ որ այդ հագուստները վերանորոգեն. Հարուստ տիկինների և աղքատ աղջկերանց այլ արժանիքների մասին ես ոչինչ չգիտէի, և այդ, հօրս կարծիքով, իմ միտկ առաւելութիւնն էր:

Կոմսուհին մի երիտասարդ այրի կին էր,

\* ) Մատ 15 առըլի:

որին ամուսինը բաւական վաղ՝ անմիտիթար կերպով վիշտ էր պատճառել իր մահւամբ: Որչափ ես դիտեմ աւանդութիւնից, հանգուցեալին ոչ ոք կոմս տիւաղոսը չէր տալիս, և ոչ էլ նա էր որկ է մէկին լիազօր անւանում: Դրա փոխարէն, հարևանները, մի տարօրինակ միահոգութեամբ մեր երկրում, նրան խելքից պակաս էին անւանում: Եւ յիրաւի նա մի անսովոր մարդ էր: Նա յոպնեցնում, սպանում էր թամբած ձիաններին. որպի ժամանակ ձիաններին կոխուել էր տալիս գիւղացիների ցանքսը, և ձիերի ու չների պատճառով հարևանների հետ մենամարտութեան էր գուրս գալիս: Տանը տանջում էր իր կնոջը նախանձից, իսկ ժառայողների կեանքը նա դառնացնում էր երկար ծխամորճի կոթով: Այդ տարօրինակ մարդու մռից յետոյ, նրա ձիաններին վիճակւեց աղք կրել, շներին էլ սրան նըւան նէր տւին: Սշխարհնը նրանից յետոյ ստացաւ որպէս ժառանգութիւն մի փոքրիկ աղջիկ և մի երիտասարդ այրի կին: Ահ, ներեցէք, որովհետեւ մնաց էլի հանգուցեալից մի իւղաններկ կենդանագիր պատկեր, մատին հագցրած տոհմային մի դրոշմատանի և մէկ էլ այն ծխամորճի կոթը, որը, սխալ գործածութեան պատճառով, ծռւել էր ինչպէս թրքական սուր:

Պալատը գրեթէ ես չէի ճանաչում: Նախ

որովհետև ես գերազասում էի վազվզել դաշտերում, քան զլորեւել հարթ պարկետի վրայ, և երկրորդ այն պատճառով, որ ինձներս չէին թողնում ծառայողները, որովհետև իմ առաջին այցելութեան ժամանակ ես գժբախտութիւն ունեցայ կոտրելու մի, մեծ սականական ծաղկաման:

Կոմունու աղջկայ հետ, իմ դպրոց փնալուց առաջ, ես խաղացել եմ միայն մի անգամ, երբ երկուսս էլ դեռ տասը տարբն չէինք լրացրել: Մի անգամ ես ուզեցի սովորեցնել նրան ծափ վրայ մազլցելու արւետը, և նստեցրի նրան ժանկապատի վրայ այն ձևով, որ փոքրիկ աղջկեր սկսեց ամբողջ բերնով բռաւել, և որի պատճառով նրա դաստիարակչունին կապոյտ հոգանոցով թակեց ինձ ասելով, որ ես կարող էի հօնիային գժբախտացնել ամբողջ կեսնքում:

Այդ ժամանակից սկսած իմ մէջ առաջացաւ հակարանք դէպի փոքրիկ աղջկները, որոնցից ոչ ոք չզիտէր մազլցել ծառերի վրայ, ոչ էլ լողալ ինձ հետ լճակում, ոչ ձի հեծնել, և ոչ էլ աղեղ ու պարսատիկ գործածել: Կուի դէպում, — առանց որի ինչ հաճոյք, գրեթէ բոլոր աղջկերը սկսում են լաց լինել, և վազում են անպատճառ որևէ մէկին գանգատելու:

Որովհետև կալածի բանւորների տղաների հետ հայրս արգելում էր յարաբերութիւն, ունե-

նալ, և որովհետև քոյրս գրեթէ միշտ էլ իր օրերը անց էր կացնում պալատում, այդ պատճառով ես աճում ու գաստիարակում էի մենակ, ինչպէս մի գիշատիչ թռչնիկ, որին մի կողմ են թողե ծնողները: Ես լողանում էի ջրաղացի տակը, և կամ ծակւած մակոյիկ մէջ լողում էի լճակի վրայ: Պարտէ զում, կատւային թեթև շարժումներով հետապնդում էի ես ճնների վրայ սկիւռներին: Մի անգամ իմ մակոյկը լուս եկաւ, և ամբողջ օրը նասեցի լւացարանի մեծութեամբ լողացող այդ կղզու վրայ: Մի անգամ էլ ծխնելոյդի միջով ես վեր մազլցեցի կառւը, բայց այնպէս անյաջող, որ ստիպւած էին երկու փոքրիկ սանդուղներ իրար հետ կապել՝ ինձ այնտեղոց ցած ըերելու համար: Միուրիշ անգամ ամբողջ օրը ես մոլորւեցի անտառում, և էլի մի ուրիշ անգամ հանգուցեալ պարոնի պառաւած ձին, վերյիշելով երջանիկ անցեալը, գրեթէ մի ամբողջ ժամ ինձ քառասմբակ վախցըեց գաշտերով, իսկ վերջը, հաւանականաբար հակառակ իր կամքի, իմ սրունքի կոտրելու պատճառը դարձաւ, որը սակայն շուտով առողջացաւ:

Չունենալով իմ կեանքի ընկերը, ես ապրում էի բնութեան հետ, ես ճանաչում էի պարտէզի բոլոր մըջնանոցները, դաշտերում համատերների բոլոր բոյները, այգում խլուրդների

բոլոր ճանապարհները։ Ես տեղեկութիւն ունէի  
թռչունների բների և ծառերի փշակների մասին,  
որտեղ բնակում էին սկիւնների ձագերը։ Ես  
կարողանում էի որոշել լորի ծառերից իւրա-  
քանչիւրի սլաղը առաջ շուրջը, և գիտեի երգել  
այս, ինչ որ քամին է նւազում ծառերի մէջ։  
Երբեմակի ես լուս էի անտառում ինչ որ յափ-  
տենական մի երթ, չնայելով ես չգիտէի, թէ  
մւմն է այս։ Ես նայում էի աստղերի պապո-  
ցին, խօսակցում գիշերային լուսթեան հետ, և  
չունենալով մէկը, որին կարողանայի ես հոմ-  
բուրել, համբուրում էի բակի շներին։ Մայրս  
վաղուց հանգստանում էր հողի մէջ։ Նրան ճըն-  
շող քարի տակ նոյնիսկ բացւածք էր գոյացել,  
որը համոււմ էր, հաւանականաբար, մինչև զե-  
րեզմանի խորքը։ Մի անգամ, ինչ որ բանի պատ-  
ճառով խստիւ ծեծելով, ես գնացի այստեղ.  
կանչում էի նրան՝ մօրս։ մօտեցրի ականջներս  
լսելու համար, արդեօք նա չի պատասխանի։  
Բայց նա ոչինչ չպատասխանեց։ Պարզ էր, որ  
նա խկապէս ժեռել էր։

Այդ ժամանակամիջոցում ես ձեւակերպում։  
Էի մարդկանց և նրանց փոխարարելութիւննե-  
րի մասին իմ առաջին հասկացողութիւնները։ Իմ  
երկայութեան մէջ, օրինակ, լիազօրը պէտք  
է անպատճառ մի քիչ գէր լինէր, պէտք

նենար մուգ կարմիր դէմք, ներքեւ կախւած բե-  
խեր, մեծ յօնքեր, գորշ աչքավերեւ, թաւ ձայն և  
գոնէ բղաւելու ախավիսի ընդունակութիւն, որ-  
պիսին ունէր հայրս։ Կոմսունի անւանւող անձ-  
նաւորութիւնը ես այլ կերպ չեի կարող պատկե-  
րացնել, քան մի բարձրահասակ տիկին, գեղեցիկ  
դէմքով և թախծուա աչքերով, որը քայլում է  
լուելեայն պարտիզում սպիտակ և երկարաքղանցք  
շրջազգեստով։

Կոմս տքաղսսով մարդու մասին ես ոչ մի  
հասկացողութիւն չունէի։ Այդպիսի մի մարդ,  
եթէ նոյնիսկ գոյութիւն ունենար, թւում էր  
աւելի քիչ նշանակութիւն կունենար, քան ինըը  
կոմսունին, և կամ մի անօգուտ և անպաշտած  
բան կը լինէր։ Իմ կարծիքով լայն և երկար քղանց-  
քով շրջազգեստի մէջ կարող էր տեղաւորւել  
միայն կոմսունին, նորին գերազանցութեան վսե-  
մութիւնը։ Ընդհակառեկը՝ բոլոր կարծ, նեղ, և  
մանաւանդ երկու մասերից բաղկացած հազոււա-  
ները կարող են ծառայել միմիայն կալւածական  
գրադիրների, օդեգործների և նոյնիսկ լիազօր-  
ների համար։

Այսպէս էին իմ օրինական հասկացողու-  
թիւնները, յենւած հօրս հրամանների վրայ, որը  
անդադար յանձնաբարում էր ինձ—սիրել և պատ-  
ել կոմսունուն։ Ասենք, եթէ ես երբեմից մոռա-

նայի այդ կանոնները, բաւոկան էր ինձ մի անգամ նայել հօրս պաշտօնատան մէջ գտնւող կեռասի գոյնի պահարանին, որտեղ ստացականների և նկատողութիւնների կողքին, մեխից կախւած էր հինգ ծայրանի գիսցիպինը \*), հասարակակարգի սկզբունքների այդ մարմացումը:

Նա ինձ համար էնցիկլոպեդիայի պէս մի բան էր, որին նայելով, ես վերյիշում էի, օրինակ, որ չպէտք է պատառտել կօշիկները, հորթերի պոչից չպէտք է քաշել, որ ամեն մի կարողութիւն Աստծուց է լինում, և այն, և այն:

Հայրս անխոնջ աշխատասէր, անբիծ, ազնիւ և նոյնիսկ շատ մեղմ մի մարդ էր: Գիւղացիներից և ծառաներից նա ոչ ոքի մատով անգամ չէր դիպչում, բայց սարսափելի կերպով բղաւում էր: Եւ եթէ նա մի քիչ խիստ էր իմ վերաբերմամբ, այդ ուներ իր իրաւացի պատճառները: Սիր երգեհնոն նւազողը, որի ծխախոտի տուփի մէջ ես մի անգամ մի քիչ հելերոսի \*\*\*) փոշի ցանեցի, և որի պատճառով ամբողջ ոուրբ պատարագի ժամանակ նա փոշտում էր փոխանակ երգելու, և անդադար սիալւում նւազելիս, —յաճախ ասում էր, որ եթէ նա մի այնպիսի

\*) Մտրակը:

\*\*) Թունաւոր խոռո:

որդի ունենար, ինչպիսին ես եմ, ատրճանակը կը արաքեցնէր նրա գլխին:

Կոմսուհուն հայրս անւանում էր բարութեան հրեշտակ: Իսկապէս, նրա կալւածում գոյութիւն չունէին ոչ սոված, ոչ ցնցոտիներ հագած և ոչ էլ անարդարութիւնից տուժող անձնաւորութիւններ: Իւրաքանչիւր մարդ, որին մի վատութիւն էին անում, գնում էր կոմսուհուն գանգատում. ով հիւանդ էր, գեղը ստանում էր պալատից. ում մի երեխայ էր լինում, խնդրում էին նրան կնքամայր լինել: Քոյրս սովորում էր կոմսուհու աղջկայ հետ, ես ևս, չնայելով խուսափում էի արիստօկրատական վերաբերութեանից, առիթ ունեցայ համոզւելու կոմսուհու արտաքոյ կարգի մեղմ բնաւորութեան մասին:

Հայրս մի քանի կտոր զէնք ուներ, որոնցից ամեն մէկը նշանակւած էր մի բանի համար: Այն ահապին երկփողանի հրացանը պէտք է ծառայէր գայլերին սպանելու համար, որոնք այնպէս խեղդուում էին մեր կալւածների ժառանգուին հօրթերը. կտյաքարէ ատրճանակը պէտք է ծառայէր կոմսուհու բոլոր մնացած ունեցւածքի պաշտպանութեան համար:

Իսկ այն զինուորական պալաշը \*) նրա պատ-

\*) Լեհական սուր:

ւի պաշտպանութեան համար։ Իսկ իբ սեփականութիւնը և պատիւը հայրս հաւանականարար կը պաշտպանէր իր սովորական ձեռնափայտով, որովհետև պատերազմական բոլոր այդ զէնքերը, որ մի քանի ամիսը մի անգամ մաքրում էր իւղով, ընկած էին կարի տակ մի տեղ, մի այնպիսի տնկիւնում, որ նոյն իսկ ես չեի կարող գտնել։

Այնուամենայնիւ ես գիտէի այդ զէնքերի մասին և շատ փափագ ունէի մի կերպով ձեռք բերելու երբեմն նրազում էի, իբր ես կատարել եմ այնպիսի մի ազնիւ գործ, որի համար հայրս ինձ թոյլ էր տալիս մի անգամ արձակել այն ահազին տարձանակը, իսկ մինչ այդ, — ես ծածուկ փախչում էի անտառապահների մօտ և սովորում էի երկար միափող նրացան արձակելը, որոնք ստկայն այնպիսի յատկութիւն ունեին, որ տրաքելու ժամանակ անմիջական փստ էին հասցնում իմ ծնուաներին առանց որևէ արարածի դիպչելու։

Մի օր, երբ հայրս իւղով մաքրում էր գայլերի համար նշանակւած երկփողանի նրացանը, սեփականութեան պաշտպանութեան համար որոշած ատրճանակը և կոմսուհու պատուի պաշտպանութեան համար նշանակւած պալաշը, ինձ յաջողւեց դողանալ հօրիցս մի բուռը վառով,

որը, ինչպէս գիտեմ, դեռ յատկապէս մի բանի համար չէր նշանակւած։ Երբ հայրս գիւղ գնաց, ես ձեռք բերի հացահատիկների ամբարի մի ահազին բանալի, որը ունէր խողովակի նման մի բացւածք ու կողքից էլ մի անցք, և գնացի որսի։

Մեծ բանալին ես կիսով չտփ լցըի վառոգով, աւելացըի ինչ որ անճանաչելի հագուստամասի կոտրաաջ կոճակների մի փոքրիկ քանակութիւն, խցեցի նրանց խծուծով, և տրաքեցնելու համար, ես վերցըի մի տուփ սպունգավառ լուցկի։

Հազիւ էի դուրս եկել տնից, երբ նկատեցի մի քանի ագռաներ, որոնք պալատին պատկանող բաղիկներն էին որսում։ Դրեթէ իմ աչքերի առջև այդ մասսակար թոշուններից մէկը բռնեց մի բաղիկ, և չկարողանալով բաւական հեշտութեամբ նրան տանել, նստեց փոքրիկ գոմի կտրի վրայ։

Այս տեսարանի հանգէալ յուզւեց իմ մէջ Վիեննայի մօտ կուող իմ նախայրերի արիւնը։ Ես գաղատգողի մօաեցայ զոմին, վտակցի վառւագ սպունգը, բանալիսվ նշան գրի սգուափ աջ ոչքին, փչեցի, կրտկեցի... աբաքեց, — ինչպէս շանթ։ Գոմի բարձունքից զլբրւց գետին արգէն իեղդւած բաղիկը, ագռաւը սորտփահար բառ ամենաբարձր լորի ծոսի վրայ, իսկ ես

զարմացած, համոզւեցի, որ իս ձեռքում մնացել են միայն մեծ բանալու կոթը, որտեղից բռնում են. բայց միւս կողմից գոմի ծղնոտէ տանիքից սկսեց գուրս գալ ծխի մի փոքր քսւայ, կարծես մէկը ծխամորճ ծխելիս լինէր:

Մի քանի լուսէից յետոյ գոմը, որ մօտ յիսուն լեհական ֆլորին արժէր, չորս կողմից բռնւեց կրակով: Վազեցին, հաւաքւեցին մարդիկ. ձիով վրայ հասաւ նաև հայրա. յետոյ այս բոլոր աղնիւ և քաջ մարդկանց ներկայութեամբ այդ անշարժելին «վառւեց մինչև գետնի մէջ տեղը», ինչպէս ասում էր պարոն օդեգործը:

Այդ ժամանակի ընթացքում ինձ հետ աննկարագելի բաներ պատահեցին: Նախ և առաջ ես վազեցի մեր բնակարանը, և կախեցի ճիշտ իրա տեղը կոտրւած բանալիի կոթը: Յետոյ ես վազեցի պարտէզ՝ լճակի մէջ խեղդւելու նալատակով: Մի վայրկեան յետոյ ես սկզբունքով փոխեցի իմ ծրագիրը և մտադրւեցի խաբել, ինչպէս կալւածական գրագիրը, ուրանալ թէ բանալին, թէ արագոցը ու թէ գոմը: Բայց երբ ինձ բռնեցին, ես բոլորը խոստովանեցի:

Ինձ առաջնորդեցին դէպի պալատը: Տերբասի վրայ ես տեսայ հօրս, կոմսուհուն իր երկարաքանցը շըջազգեստով, բաւական կարճ հագնուած կոմսուհու աղջկան և իմ քրոջը. վերջին

երկուսն էլ լալիս էին: Յետոյ տնտեսուհի Սալոմէին, սենեկապետին, լակէին, բուժետում ծառայող տղային, խոհարարին, նրա օգնականին և նաժիշտների, ծառայող օրիորդների և գիւղացի աղջկերանց մի ամբողջ բանակի: Երբ ես դարձրի աշքերս հակառակ կողմը, տեսայ շինութիւնների յետեւում լորիների կանաչ բարձունքները, իսկ մի քիչ էլ աւելի հեռու՝ ծխի մուգ դեղնագոյն մի սիւն, որը, կարծես դիտմամբ էր բարձրանում հրդեհավայրից վերև:

Այդ լուսէին ես յիշեցի երգեհոն նւազողի խօսքերը, որը պնդում էր աստրանակով իմ գլւխին տրաքեցնելու անհրաժեշտութեան մասին, և ես եզրակացրի.—եթէ երբեկցէ պիտի մեռնեմ առանց իմ կամքի, այդ հաւանականաբար պատահելու է հենց այսօր. ես հրդեհեցի գոմը, վիշացրի ամբարի բանալին. քոյրս լալիս է, բոլոր ծառայողները կանգնած են պալատի առաջ. այս բոլորը ինչ է նշանակում...

Ես միայն նայեցի, արդեօք, խոհարարը ձեռքում ունի բռնած իր հրացանը, որովհետեւ նրա պարտականութիւններից մէկն էր, ինչպէս կրակել նապաստակներին, այնպէս նաև մահացու հիւանդ ընտանի կենդանիներին:

Ինձ առաջնորդեցին կոմսուհու մօտ: Նա նայեց ինձ իր թախծոտ աշքերով, իսկ ես ձեռւ-

քերս յետ, մէջքիս գնելով (ինչպէս ես սովորութիւն ունէի անել անդիտակցաբար հօրս ներկայութեամբ), բարձրացը զլուխս, որովհետև տիկինը բարձրահասակ էր:

Այս ձեռով մի քանի լոպէ մենք նայում էինք իբար ուշադրութեամբ: Ծառայողները լուռ էին, և օդում զգալի էր վառւած իրերի հոտը:

— Թւում է ինձ, պարոն Լեսնինսկի, որ այս աղան աշխոյժ տեմպերամենտ ունի, — ասաց բաղցը ձայնով կոմսունին հօրս:

— Ստահակ... Հրդեհածիգ... փչացրեց իմ ամբարի բանալին, — վրայ բերեց հայրս և յետոյ արագութեամբ աւելացրեց.

— Ընկիր շուտով կոմսունու ոտքերը, դու սրիկայ...

**Եւ թեթև կերպով ինձ առաջ հրեց:**

— Եթէ զուք ցանկութիւն ունեք ինձ սպանել, սպանեցէք, ապա թէ ոչ ես ոչ ոքի ուները չեմ ընկնի, — պատասխանեցի ես չդաբճնելով ոչքերս աֆկնոչքց, որը ինձ վրայ տարօրինակ տպաւրութիւն թաղեց:

— Ֆաւ... եզուխտ... հառաջեց գայթակղւած Սալօմէն, գարուելով ձեռները կրծքի վրայ:

— Հանգառացիք, փոքրիկս, որովհետև այս անդ բեզ ոչ ոք մի վառ բռն չի անի, — ասաց աֆկինը:

— Հա... ոչ ոք... միթէ չկիտեմ, որ ատրը ճանակը զլսիս պիտի տրաքեցնէք... այդ բանը չէ որ ինքը, երգեհոն նւազողն ինձ տսաց, — առարկեցի ես:

— Ֆու... եզուխտ... կանչեց երկրորդ անգամ անտեսունին:

— Նախապատռում է իմ ծերութիւնը, — սկըսեց խօսել հայրս. այսպահակի կաշին ես երեք անգամ կը քերթէի և վրան աղ կը ցանէի, եթէ կոմսունին չվերցնի նրան իր հոգանաւորութեան տակ:

**5804**  
Խոհարարը, որը կանգնած էր տերրասի անկիւնում, ծածկել էր բերանը ձեռքով և ծիծագում էր, մինչև բոլորովին կապաեց: Ես չըկարողացայ այդ տանել և ցոյց տեսցի նրան եղուս:

Ծառաները սկսեցին գարմանքից փսխավ, խոկ հայրս, բռնելով թեփս, բղաւեց.

— Ահա, թէ էլի ինչ ես անում... կոմսունին ներկայութեամբ դու լեզմաւ ես ցոյց տավս...

— Ես լեզուս ցոյց տվի խոհարարին, որովհետեւ նա մտածում է, թէ ինձ էլ կարող է հրացանազարկ անել ու սպանել, ինչպէս այն գունատ և գեղին ձիուն...

կոմսունին աւելի թախծուա գարձնուա նահակուա 7/11-1922 Ա. Խաչիկիս Ա. Խաչիկիս Ա. Խաչիկիս

ախ մաղերը մի կողմ տաքաւ, խորը նայեց աչքերիս և ասաց հօրս.

— Ով գիտէ, պարոն Լեսնիկովի, Քնչպիսի մարդ դուքս կը դայ այս երեխայից...

— Կախազանի թեկնածու, — կարճ պատասխանեց վշաացած հայրս:

— Այդ չի կարելի իմանալ, — հերքեց ափվնը, հարթելով իմ բիզ-բիզ ցցւած մաղերը:

— Գէտք է նրան ուղարկել դպրոց, որովհետեւ այսաեղ նա բոլորովին կը վայրենանայ:

Եւ յետոյ հեռանալով դահլիճը, նա ասաց կիսաձայն.

— Սա դեռ հում նիւթ է, պարոն Լեսնիկովի... պէտք է միայն նրան կըթել:

— Թող կոմսուհու կամքի համաձայն լինի, — պատասխանեց հայրս, բոռնցքով խփելով իմ ծոծրակին:

Տերրասից բոլորը հեռացան, բայց ես մացի անշարժ, ինչպէս քար, անդադար նայելով այն դռան, որտեղով անյայտացաւ մեր կալածտիրուհին: Այժմ միայն ես մտածեցի, ցաւելով, թէ ինչու ես նրա ոտները չընկայ: Եւ կրծքիս մէջ մի ճնշում զգացի: Եթէ նա հրամայէր, ուրախութեամբ ես կը պառկէի այրւող դոմի մացորդների վրայ և կը թողնէի, որ իմ մարմինս դանդութեամբ խորովէի այնտեղ: Ոչ

թէ այն պատճառով, որ նա չիրամայեց իոհարաբին՝ կրակել և սպանել ինձ, և ոչ էլ բռուցքով ծեծել, այլ այն պատճառով, որ նա այնպիսի քաղցր ձայն և թաթծու հայեցը ունէր:

## II

Այդ օրից սկսած ես ուելի քէչ էի պատահումունին կրակի մէջ չէր ցանկանում կորցնել մացած շէնքերը. հօրս համար էլ շատ անուխորժ էր, որ չկարողացաւ ինձ տիկին կոմսուհու մօտ տեղաւորել. այնպէս որ, ես ինքո պէտք է պատրաստէի դպրոցի համար: Ուսուցանում էին ինձ երգեհոն նւագողը և օղեգործը: Նոյն իսկ ասում էին, որ ինչ որ տռարկաների դասեր պիտի ունենայ ինձ հետ պալատի դասուիարակչուհին: Բայց երբ այս տիկինը, ինձ հետ ծանօթանալիս տեսաւ, որ դրպաններս լիքն են դանակներով, քարերով, մեռալի կառրատներով և կապսումներով, այնպէս վախեցաւ, որ այլևս չէր ուզում ինձ տեսնել երկրսրդ անդամ:

— Այդպիսի աւագակների ես դաս չեմ տալիս, — ասել էր նա իմ քրոջը:

Այսուամենայնիւ այդ ժամանակները ես բաւական լրջացայ: Միտյն, մի անդամ, փորձի համար, ես ուզում էի ինձ կախել: Բայց ինձ

մի բէշ ննջեցի և յետոյ քնեցի իմ համազգեստովս  
մինչև առաւետ:

Այս տեսակի գիշերանցը շատ գւարճեցը եց  
ընկերներիս, բայց մեր պանսիոնի տիրոջ մէջ  
առաջացը եց այն կասկածը, որ նա իր տանը  
մի արտաքոյ կարգի չարտաճի տղայ ունի: Նա  
վագեց արագութեամբ հիւրանոցը, որտեղ տեղա-  
ւորւել էր հայրս, և ասաց նրան, որ աշխարհիս  
հարսաւոթիւնների գնով անդամ նա չի ուզում  
ունենալ ինձ իր պանսիոնում, իսկ եթէ բացա-  
ռութիւն անի, այդ էլ այն գէպօւմ, եթէ հայրս  
նորից աւելացնէ տարեկան հինգ գրւան գետնա-  
խնձոր: Երկար սակարկութիւնից յետոյ, նրանք  
համաձայնւեցին երեք գրւանի վրայ: Բայց հայրս  
մնաք բարև ասաց ինձ այնպէս դեմոնստրատիւ  
և ազգեցիկ կերպով, որ ես ոչ ցաւեցի նրա  
գնումու համար, և ոչ էլ կարօտ զգացի գէպի  
մեր ընտանիքը, որտեղ այդպիսի օվացիաներ  
կարող էին յաճախ պատահել:

Առաջին դասարանում ստացած դաստիարա-  
կութեան ժամանակամիջոցը այնպիսի մի աչքի  
ընկնող մոմենտներ չէ պարունակում իր մէջ:  
Այսօր նայելով այդ ժամանակաշրջանին պատ-  
մական հեռաւորութիւնից, մի բան, որ շատ  
անհրաժեշտ է, ինչպէս գիտէք, օբեկտիւ կար-  
ծիք ունենալու համար, ես խոստովանում եմ,

հետ մի ուրիշ գործ պատահեց, որից յետոյ  
ես այլիս մի վատ բան չարի:

Վերջապէս օգոստոսի սկզբին ինձ տարան  
գպրոց:

Քննութիւնը ես յաջող կերպով տւի,  
շնորհիւ կոմսուհու յանձնաբարական նամակնե-  
րի: Յետոյ հայրս ինձ տեղաւորեց մի պանսիո-  
նում, որի տիրոջ օժանդակ գասերի, ծնողական  
հոգատարութեան և ամեն տեսակի յարմարու-  
թիւնների համար նա պիտի վճարէր երկու հա-  
րիւր լեհական ֆլորին \*), տարեկան հինգ գրւան  
էլ հացահատիկ լրացուցիչ վճար: Իսկ ամենից  
յետոյ նա գնեց ինձ համար գպրոցական համա-  
զգեստ:

Նոր հագուստը այնպէս ինձ զբաղեցրեց,  
որ ցերեկը նրա համար ունեցած ուրախութիւնս  
բաւական չհամարելով, վերկացայ գիշերը բոլո-  
րովին կամացուկ, հագայ խաւարի մէջ կարմիք  
օձիքաւոր սիւրտուկս. Գլխս զրի կարմիք երե-  
զաւոր գլխարկս և մտադրւեցի մի քանի ըսպէ  
այդպէս նստել: Բայց որովհետեւ գիշերը անձրե-  
ւային էր, և գոնից թեթև միջանցիկ քամի էր  
փչում, իսկ ես էլ համազգեստից և զիսարկիցս  
վատ տանու շորերով էի, այդ պատճառով ես

\*) Մոտ 30 ռուբլի.

ում կեանքը, ընդհանրապէս, մի քիչ փոխւել էք: Դպրոցում քիչ աւելի երկար էի նստում ես փակ սենեակում, տանը՝ մի քիչ վաղվզում էի բայ տարածութեան մէջ: Հանելով տնային հագուստներս՝ ես հագնում էի համազգեստս, և այն անձինք, որոնք իմ մարմարական և հոգեկան ընդունակութիւնների ներդաշնակ զարդացման համար էին աշխատում, մտրակի փոխարէն կիրառում էին ճիպուը:

### Ահա ամբողջ տարբերութիւնը:

Դպրոցը, ինչպէս յայտնի է, շնորհիւ իր հաւաքական ընաւորութեան, պատրաստում է մանուկներին կեանքի համար հասարակութեան մէջ, և տալիս է նրանց այնպիսի կարողութիւններ, որոնց նոքա ձեռք չէին բերի, եթէ առանձինառանձին դաստիարակւէին:

Այս ճշմարտութեան մասին ես համոզւեցի մի շաբաթ զպրոցում հալուց յետոյ, որտեղ ես սովորեցի պամիր ճզմելու \*) արւեստը, որը պահանջում է ամենապակասը երեք անձնաւորութեան գործակցութիւնը, ապա ուրեմն նա չի կարող գոյութիւն ունենալ հասարակութիւնից դուրս:

Այժմ միայն ես գտայ իմ մէջ իսկական տաղանդ, որը յետ էր պահում ինձ տեսական

\*) Աշոկերանների երար հընկը:

խորասուզութերից, և մղում էր ինձ դէպի կողմէկախիւ գործունէութիւն: Ես պատկանում էի առաջին կարգի խաղագնդակ նետողների թւին. կոփւների ժամանակ զօրապետը ես էի. ես կազմակերպում էի էքսկուրսիաներ դասարանից դուրս, որոնք «Ծափառութներ» անունն էին կրում: Ես էի զեկավարում դասարանում աշակերտների ոտերը յատակին թրիկթրիսկացնելը և կամ զանգան ձայներ հանելը, որը, հանգստամալու համար, երբեմն կազմակերպում էինք մենք վաթուն հոգով: Ընդհակառակը, երբ մենակ էի գտնւում քերականական կանոնների բացառութիւնների, հոլովութների և խոնարհութների հետ միասին, որոնք կազմում էին, ինչպէս յայտնի է, փիլիսոփայական մտածողութեան հիմքը, ես շուտով զգում էի հոգուս մէջ մի ինչ որ դատարկութիւն, որի խորքերից երևան էր գալիս քունը:

Եթէ, հակառակ այն բանի, որ դէպի զըպրոցական դասերս ոչ մի ձգտում չունէի, և պատասխանում էի այնուամենայնիւ դասերս բաւականի վարժ, այդ պիտի վերագրել իս հրաշալի տեսողութեանը, որը թոյլ էր տալիս ինձ կարգալ դրեից երկու կամ երեք նստարան հեռաւորութիւնից: Երբեմն պատահում էր, որ ես պատասխանում էի բոլորովին այլ բան, քան իմ դասն էր, բայց այդ ժամանակ ես գործ էի

ածում այլպիսի դէպքերում ընդունւած սովորական արտայայտութիւնը։ Ես ասում էի, որ սխալ լսեցի հարցը, և կամ՝ շփոթւեցի։

Ըստի անրապէս ես ապագայի աշակերտ էի, ոչ միայն այն պատճառով, որ ես անբաւականութիւն էի պատճառում ծեր աւանդամոներին, և գրաւում էի երիտասարդների համակրանքը, այլ միմիայն նրա համար, որ զանազան առարկաների լաւ թւանշանները, և գրանց հետ միասին իմ ապագայ պատւաւոր դիրքի յոյսը, ես տեսնում էի միմիայն իմ անուղջների մէջ, որոնք թուզում էին հեռու, հեռու ներկայից։

Իմ յարաբերութիւնները ուսուցիչների հետ տարբեր էին։

Լատիներէնի ուսուցիչը ինձ բաւականի լաւ նիշեր էր դնում, և այդ նրա համար, որ ես ջանամիրութեամբ էի սովորում գիմնաստիկան, որը նոյնպէս նա էր սովորեցնում։

Հայր-պրեֆեկտը \*) ինձ երբէք լաւ թւանըշան չէր նշանակում, որովհետեւ ես նրան դժւարին հարցեր էի տալիս, որոնց համար նա միայն մի պատասխան ունէր. — «Լեսնեսկի, զնա չուքիր»։ Գծագրութեան և վայելչագրութեան ուսուցիչը հովանաւորում էր ինձ, որպէս գծագրիչի,

\*) Կրօնուույց։

բայց վատաքանում էր ինձ որպէս գեղագրողի, և որովհետեւ նա, իր տեսակէտով, զրելու արւետը դարսոցական առարկաներից ամենակարեւորն էր համարում, խորհրդակցելով ինքն իր հետ, չափազանց շատ էր ծանրանում գեղագրութեան վրայ, և շարում էր ինձ միաւորներ, երբեմն միայն երկումներ։

Թւարանութիւնը ես բաւական լաւ էի հասկանում, որովհետեւ նրա ուսուցումը հիմնած էր գիտողական մեթոդի, այսինքն անուշագրութեան համար ստացւած ռձեռքի հարւածներից վրայ։ Լեհական լեզուի ուսուցիչը գուշակում էր ինձ համար փայլուն կարիերա, որովհետեւ մի անգամ նրա անւանակոչութեան տօնին յաջողւեց ինձ մի ստանաւոր զրել, որի մէջ գովում էր նրա խստութիւնը։ Վերջապէս միւս առարկաների նիշերը կախւած էին այն բանից, թէ արդեօք հարկանաներս լաւ էին ինձ յուշում, և կամ արդեօք դիրքը, որը գտնուում էր դիմացի սեղանի վրայ, ճիշտ տեղն էր բացւած, թէ ոչ։

Բայց ամենամտերիմ յարաբերութիւններով կապւած էի ես տեսչի հետ։ Այս մարդը այնչափ վարժւել էր ինձ ծեծելու մէջ դասի ժամանակ դասարանից դուրս անելու համար, և այնչափ վարժւել էր ինձ դուրս տեսնել, որ նա անկեղծօրէն անհանգստանում էր, եթէ մի շա-

բաթ չէի յիշեցնում նրան իմ գոյութեան մասին:

— Լեսնիսսկի, — կանչեց նա մի օր, երբ տեսաւ, որ արգէն դասարանից ուղղակի տուն եմ գնում. — Լեսնինսկի... ինչու համար ապա չես մում...

— Բայց ես ոչ մի վատ բան չեմ արել, — դատասխանեցի ես:

— Ի՞նչ եմ լսում, ուրեմն քո անունը գըրւած չէ դասարանական ժուրնալի մէջ:

— Ոչ, հայրիկիս արել վկայ:

— Եւ դու դասերդ դիտէիր...

— Այսօր ինձ բոլորովին չեն հարցրել...

Տեսուչը մտքի մէջ ընկաւ:

— Այստեղ ինչ որ բան կայ թագնւած, — փսփսաց նա: — Լսիր, Լեսնիսսկի, մի բոպէ մռա այստեղ:

— Պարոն տեսուչ, բայց ես ոչ մի բանի մէջ յանցանք չունիմ... ճշմարիտն եմ ասում, Աստւած վկայ...

— Ա. — հա, դեռ երդւում էլ ես, աւանակ... ուրեմն գնա իսկոյն... և եթէ զու, իսկապէս, ոչ մի վատ բան չես արել, այն ժամանակ մենք այդ հաշիւը մի այլ անգամ կը տեսնենք...

Ըսդհանրապէս ես տեսուչի մօտ բաց կրեդիտ ունէի, որի օգնութեամբ ես դպրոցում կատարեալ ժողովրդականութիւն էի վայելում,

այն էլ այնպիսի մի ժողովրդականութիւն, որի պատճառով ոչ ոք չէր համարձակում մըցութեան մէջ մտնել ինձ հետ:

### III

Շաալին դասարանի մի քանի տասնեակ աշակերտների մէջ, որոնցից մէկն արգէն ածիւլում էր իր բեխերը իսկական ածելիով, երեք հոգի ամբողջ օրը կարտ էին խաղում սեղանի աակ, մի քանիսները առողջ էին, ինչպէս կանառնիսաներ<sup>\*</sup>). կար նուև այլանդակին մէկը՝ Ցովսէփ անունով: Նա մի սապատաւոր, իր տարիքի համեմատ թղուկ, նիհար, կապտած փոքրիկ քթով, գունատ աչքերով և հարթ մազերով մի փոքրիկ աղայ էր: Նա այնչափ թոյլ էր, որ բնակարանից դպրոց գալիս ճանապարհին պէտք էր հանգստանար, և այնչափ վախկոտ, որ երբ կանչւում էր գաս պատասխանելու, վախից լեզուն կտպւում էր: Նա ոչ ոքի հետ երբէք չէր կը լում, միայն խնդրում էր բոլորին, որ իրեն չըծեծեն:

Մի անգամ, երբ թըխկացըն նրա տախտակի պէս նիհար ձեռքին, նա ուշագնաց եղաւ, ստկայն գիտակցութեան գալով նա չգանգտաւեց:

Նա ճնողներ ունէր, բայց հայրը վանդելով

\*) Բանակում գարժած նորակոչ վինտերներ:

մօրը տնից, Յովսէփին պահել էր իր մօտ, ցանկանալով ինքը ղեկավարել նրա դաստիարակութիւնը: Նա ինքն էր ցանկանում շարունակ ընկերակցել որդուն դէպի դպրոց, զրօսնել նրանետ և նրան օժանդակ դասեր տալ. սակայն նա չէր անում այդ՝ ժամանակ չունենալու պատճառվ, որը սակայն այնպէս տարօրինակ կերպով արագ էր սահում Մօշիկ-Լիպայի ողելից խմիչքների և վարսակի դարեջրի վաճառատանը:

Այնպէս որ Յովսէփը ոչ մի խնամակալ չունէր, և երբեմն ինձ թւում էր, որ այդպիսի մի թղուկ մարդու Աստւած էլ սիրալիր կերպով չէ նայում երկնքից:

Զնայելով դրան՝ Յովսէփը միշտ փող էր ունենում, օրական վեցից մինչև տասը գոօշ \*): Այս փողերով նա գնում էր դասամիջոցին երկու բուլկի և մի կտոր փոքրիկ երշիկ: Եւ որովհետեւ նա բոլորից հալածւում էր, այդ պատճառով ցանկանալով գոնէ որոշ չափով ապահովագրել իրեն, գնում էր սովորաբար հինգ բուլկի և բաժանում էր ամենաուժեղ ընկերների միջեւ, որպէսզի նրանք սիրալիր վերաբերմունք ունենան դէպի ինքը:

Այս տուրքը սակայն քիչ էր օգնում նրան, որովհետեւ այդ հինգ սիրալիր դարձածներից

\*) Պաօշ-Հովեկի:

բացի՝ երեք անդամ աւելի անհաջու ընկերներ կային: Այդ պատճառով էլ նրանք անդադաբ նրան չարչարում էին: Մէկը կսմթում էր նըրան, միւսը մազերն էր քաշում, երրորդը ծակում էր նրան մի բանով, չորրորդը ականչներն էր ոլորում, և ամենաանհամարձակը անւանում էր նրան զոնէ կուզիկ:

Այդպիսի ընկերական կատակների համար Յովսէփը միայն ժպտում էր. երբեմն միայն խնդրում էր «դէ, հանգիստ թողէք»... երբեմն էլ նա նոյնիսկ ոչինչ չէր ասում, ծածկում էր միայն երեսը իր նիհար ճեռքերով, և հառաջանքով լալիս:

Այդպիսի դէպքերում ընկերները կանչում էին՝ նայեցէք, տեսէք, սապատը ինչպէս է ցնցւում... և չարչարում էին նրան աւելի և յամառօրէն:

Սկզբում ես քիչ էի ուշադրութիւն դարձնում կուզիկի վրայ, որը ինձ վրայ մեռածի տպաւորութիւն էր թողնում: Բայց մի անդամ այն մեծ տղան, որը, ինչպէս ասացի, ածիկում էր իր բեխերը, նստեց Յովսէփի յետնը, և սկսեց նրա երկու ականչներն էլ ոլորել: Կուզիկը սաստիկ լացից գողում էր, իսկ ամբողջ դասարանը լիք բերան ծիծաղում էր: Այդ ժամանակ կարծես մի բան ծակեց իմ սիրալը: Ես արտգու-

Թեամբ հանեցի գրպանիս դանակը և իրեցի ոյն  
տնպիտանի ձեռքը, որը ուղրում էր կուղիկի  
ականջները, բղաւելով,—այսպէս կռնեմ բոլոր  
նրանց, որոնք մատով նոյնին ձեռք կը տան  
Յովսէփին... Հսկոյ տղայի ձեռքից դուրս ցայ-  
տեց արիւնը. նա գունդառուեց, ինչպէս կուփճ,  
և թւում էր, թէ պիտի ուշից դնոր. Ամբողջ  
դասարանը միանդամից դադարեց ծիծաղելուց.  
իսկ յետոյ տղաները սկսեցին բղաւել,—նա որ-  
ժանի է դրան, թող նա չչարչարէ կուփիկն:  
Եյդ ըովէին ներս մտաւ ուսուցիչը, և իժանո-  
լով, որ ես վիրաւորել եմ մեր դասընկերին  
դանակով, նա ուզում էր կռնչել վերտոնեացն,  
ծառայի և ճիպոտի հետ միասին: Բայց բոլորը  
սկսեցին ինձ համար ինդքել, նոյնիսկ այդ հը-  
կայ տղան: Դրանից յետոյ մենք իրար հետ համ-  
բուրւեցինք,—նախ ես այդ մեծ տղայի հետ,  
յետոյ նա Յովսէփի հետ, յետոյ Յովսէփին էլ  
ինձ հետ, և, այսպիսով, ես դուրս եկայ այդ  
դործից բոլորովին անփառ:

Ես նկատում էի, որ ամբողջ դասի ընթաց-  
քում կուզիկը գլուխը շարունակ իմ կողմն է  
դարձնում, երկի նրա համար, որ այդ ժամա-  
նակի ընթացքում ոչ ոք նրա ոկտնջը չէր ոլո-  
րում:

Դասամիջոցի ժամանակ ես ոչ ոք նրան չեմ

չարչարում, մի քանիմներն նոյնիսկ յայտաբա-  
րեցին, որ իբենք կը պաշտպանեն նրան: Նո  
շնորհակալութիւն էր յայտնում նրանց, բայց  
վազում էր դէպի ինձ և ուզում էր տալ ինձ մի  
կառը բուլկի: Ես չընդունեցի, որից նա մի քէւ  
ամաչէց, և յետոյ ասաց ցածր ձայնով.

— Լոիր, Լեսնիեսկի, ես քեզ մի գաղանի  
բան ունիմ տաելու:

— Խօսիր,—պատասխանեցի ես,—միայն  
շնուռ...

Կուզիկը շփոթւեց և յետոյ հարցրեց.

— Արդեօք դու բարեկամ ունիս...

— Բայց միթէ ես կարիք ունիմ բարե-  
կամի...

— Որովհետեւ, եթէ դու ցանկանաս, ես կա-  
րող էի քո բարեկամը լինել:

Ես նայեցի նրան հպարտութեամբ: Նա աւե-  
լի ես շփոթւեց և նորից հարցրեց իր քնքոյշ և  
մեղմիկ ձայնով.

— Ինչու չես ուզում, որ ես քո բարեկամը  
վինեմ:

— Որովհետեւ ես յարաքերութիւն չեմ ու-  
զում ունենալ այնպիսի մեռածների հետ, ինչպի-  
սին դու ես,—պատասխանեցի ես:

Կուզիկի քիթը կտպտեց սովորականից ա-

ւելիք նա ուզում էր արդէն հեռանալ, երբ մի անգամ էլ դարձաւ ինձ և ասաց.

— Այն ժամանակ գուցէ դու կը ցանկանաս, որ ես նստեմ քո կողքին... իսիր, ես ուշագրութիւն կը դարձնեմ, թէ ուսուցիչները ինչ դասեր են տալիս. ես քո փոխարէն թւաբանութիւնից տրւած օրինակները կը լուծեմ... ես լու յուշել գիտեմ...

Վերջին պատճառաբանութիւնը ինձ կարեւոր թւաց: Քիչ մտածելուց յետոյ՝ ես կուզիկին իմ նստարանի վրայ ընդունեցի, իսկ իմ հարեւանս համաձայնեց հինգ բուլկով իր տեղը զիշել նրան:

Կեսօրից յետոյ Յովսէփը տեղափոխւց ինձ մօտ: Նա իմ ամենաանկեղծ օգնականը, հաւատարմատարը և գովարանող աշակերտը դարձաւ: Նա ինձ համար անում էր բոլոր թարգմանութիւնները և փնտրում էր անհասկանալի բառերը, նա նշանակում էր արւած օրինակները: Նա տանում էր մեր երկուսիս թանաքամանները, զրիչները և մատիտները: Եւ ինչպէս լու էր յուշում:— Իմ գպրոցում եղած ժամանակ, շատերն են ինձ յուշել: Մի քանիսները նոյնիսկ ստիպւած էին դրա պատճառով չոքել, բայց ոչ ոք այդ արհետի մէջ չէր կարող համեմատուել Յովսէփի հետ: Յուշելու մէջ կուզիկը

վարպետ էր, որովհետև նա կարողանում էր առամեները սեղմած խօսել, և միենոյն ժամանակ այնպիսի անմեղ դէմք էր ցոյց տալիս, որ ուսուցիչներից ոչ մէկը մի բան անդամ չէր կառկածում...

Ամեն անդամ, երբ ես փակւած էի լինում կարցերում, կուզիկը թագուն ինձ հաց և միս էր բերում իր ճաշիցը: Եւ եթէ ես ունենում էի մի քիչ աւելի մեծ անախարժութիւն, այն ժամանակ, արտասուքները աչքերին, նա հաւատացնում էր բոլոր ընկերներին, որ ես չեմ կազող տանել և ոչ մի անարդարութիւն, որ կարող են ինձ անել:

— Հա, հա,— ասում էր նա, — Կազեան ուժեղ է: Նա եթէ ծառացի ուսերից բռնէ, զըժ պէս գետնով կը տայ: Մի վախենաք:

Իսկապէս իմ ընկերները չէին վախենում, բայց այդ թշւառը վախենում էր երկուսիս համար էլ:

Եթէ կուզիկը որևէ գասի ժամանակ կարիք չէր ունենում ուշազրութեամբ լսելու, այն ժամանակ նա ինձ հաճոյախօսութիւններ էր անում.

— Ասուած իմ... եթէ ես այնպէս ուժեղ լինէի, ինչպէս դնւ... Ասուած իմ... եթէ ես այզպէս ընդունակ լինէի... իմացիր, որ եթէ միայն գու

ցանկանայիր, մի ամսից յետոյ տռաջին աշակերտը կը դառնայիր...

— Մի օր, բոլորովին անսպասելի կերպով, գերմաներէնի ուսուցիչը կանչեց ինձ ամբիոնի մօտ: Սարսափահար Յովսէփը հազիւ ժամանակ գտաւ յուշելու, որ չորրորդ հոլովման պատկանում են բոլոր իդական սեռի գոյականները, օրինակ, die Frau —կինը...

Ես դուրս եկայ հաստատ քայլերով և մեծ վստահութեամբ պատասխանեցի ուսուցչին, որ չորրորդ հոլովման պատկանում են բոլոր իդական սեռի գոյականները, օրինակ, die Frau —կինը... բայց գրանով էլ վերջանում էր իմ ամբողջ գիտութիւնը:

Ուսուցիչը նայեց իմ աչքերին, օրօքեց զլուխը և հրամայեց մի կտոր թարգմանել: Ես կարդացի գերմաներէն՝ սահուն և բարձր տռաջին անդամ, յետոյ աւելի ևս սահուն —երկրորդ անդամ, և եթե ևս սկսեցի երրորդ անդամ կարդալ նոյն կտորը, ուսուցիչը հրամայեց ինձ զնալ իմ տեղը:

Վերադանալով դէպի իմ նստարանը, ես նկատեցի, որ Յովսէփը մեծ ուշողութեամբ նայում է ուսուցչի մատերին, և որ նա շատ վշտացած կերպարանը ունի:

Բնագդաբար ես հարցը կուզիլին.

— Զվիտճա արդեօք ինչ թւանշան դրեց ինձ:

— Միթէ ես կարող եմ թմանալ... —հառաչեց Յովսէփը:

— Բայց զու ինչ ես կարծում:

— Ես քեզ հինդ կը դնէի, ասաց կուզիկը, —նու, ամենապակասը՝ չողս, բայց նա...

— Բայց նա, նա քանի դրեց ինձ... —հարցի ես:

— Ինձ թւաց, որ... մէկ... բայց այդ անպիտանը ինչ զիտէ... —պատասխանեց Յովսէփը այնպիսի մի ձայնով, որի մէջ նչում էր խոր համեստում:

Հակառակ իր թոյլ կազմւածքի, կուզիկը աշխատառուէր և ընդունակ էր: Ես դասարանում սովորաբար վէպեր էի կարգում, իսկ նա բուժ էր գաուը և յետոյ կը կնում ինձ:

Մի անգամ ես հարցը նրան. ինչի՞ մասին խօսեց մեր կինդաբանութեան ուսուցիչը:

— Այն բանի մասին, —պատասխանեց կուզիկը խորհրդաւոր կերպարանքով, —որ բոյսերը նման են կենդանիներին:

— Յիմար է նա, —պատասխանեցի ես:

— Այնուամենայնիւ, —ասաց կուզիկը, —նա իբրաւացի է: Ես մի քիչ արդէն նասկանում եմ նրան,

Ես սկսեցի ծիծաղել, և ասացի նրան.

— Նու, եթէ դու այդշափ խելօք ես, այն ժամանակ ասա ինձ, ինչով է ուսին նմանում կովին:

Տղան խորասուզւեց մտածողութեան մէջ և սկսեց խօսել դանդաղօրէն.

— Նայիր, կովը աճում է, ուսին նոյնպէս աճում է...

— Եւ էլ ինչով...

— Կովը կերակրում է, ուսին էլ կերակրում է երկը մէջ գտնուող հիւթերով...

— Եւ էլ ինչով...

— Կովը իդական սեռին է պատկանում, ուսին \*) էլ իդական սեռի է, — բացարեց Յովեկի:

— Բայց կովը շարժում է իր պոչը, — ասացի ես:

— Ուսին էլ շարժում է իր ճղները, — ասարկեց նա:

Մի շարք այդ տեսակի արդումնները թուլացրին իմ մէջ կենդանիների և բայսերի միջև գոյութիւն ունեցող տարբերութեան մասին իմ ունեցած համոզումը: Միւս կողմից հենց այդ կարծիքը ինձ գուր էր գալիս. այդ ժամանակից սկսած իմ մէջ արթնացաւ սէր գէպի կեն-

\*) Անական լեզուվ.

դանաբանութիւնը, որը այնպէս լաւ ամփոփւած է Պիտուղևսկու գրքի մէջ: Շնորհիւ կուղիկի արգումենտների՝ ես սկսեցի այս առարկայից հինգեր ստանալ:

Մի օր Յովեկիը չեկաւ դպրոց, իսկ հետեւեալ օրը կէսօրից առաջ ինձ յայտնեցին, որ մէկը դուռը բաղվում է ինձ դասարանից դուրս է կանչում: Ես անհանգիստ դուրս վագեցի միջանցքը, ինչպէս լինում էր նման գէպքերում, բայց, վերատեսչի փոխարէն, ես տեսայ մի գերմարդու, բաց-կարմիք գէմքով, մանիշակաղոյն քթով և կարմիք աչքերով:

Անձանօթը սկսեց խօսել քիչ խոպոտ ձայնով:

— Դու, տղաս, Լեսնիմւսկին ես:

— Այս:

Նա կէս քայլ արեց, կարծես օրօրւելով, և աւելացրեց.

— Այցելիր իմ որդուն, Յովեկիին, այն սապատաւորին, զիտէս: Նա հիւանդ է, որովհետեւ սնցեալ օրը կառքը մի քիչ ճիլեց նրան...

Նա կրկին օրօրւեց, նայեց ինձ իր երերուղ աչքերով և հեռացաւ, ուները ամուր թրխկթը ըսկացնելով յատակին: Ես ինձ այնպէս զգացի, կարծես մէկը եռացող ջուր թափեց վրաս: Թըւաց ինձ, որ կառքը աւելի ճիշտ իմ վրայով

պիտի անցած լիներ, քան այդ խեղճ կուզիկի, —  
նրա, որ այդչափ բարի և թոյլ մի արարած է:

Կէսօրից յետոյ մենք աղատ էինք... Ես ըր-  
դնացի տուն ճաշելու, այլ ուղղակի վազեցի գէ-  
պի Յովսէփը:

Նա իր հօր հետ ապրում էր քաղաքի ծայ-  
րում, երկու փոքրիկ սենեակներում, գետնա-  
յարկի վրայ: Երբ նրա մտայ, ես տեսայ կուզի-  
կին պառկած կարճ մահճակալի վրայ: Նա միայ-  
նակ էր, բոլորովին միայնակ: Նա շնչում էր  
դժւարութեամբ, և դոդում էր ցրտից, որովհե-  
տեւ վառարանը վառ չէր: Նրա բիբերը այնպէս  
լայնացել էին, որ կարծես թէ նրա աչքերը ամ-  
բողջովին սև էին: Սենեակնում զգալի էր խոնա-  
ռոթիւն, իսկ կառուքից կաթեթում էին հալչող  
սառոցի կաթիւները:

Ես կուցայ մահճակալի վրայ և հարցրի.

— Ի՞նչ է պատահել քեզ, Յովսէփ:

Նա մի քիչ աշխուժացաւ, բաց արեց բե-  
րանը, կարծես ժողալու համար, բայց նա մի-  
այն հառաջեց: Նա բանեց իմ ձեռքը իր չորա-  
ցած թաթիկներով և սկսեց խօսել.

— Ես երեի կը մեռնեմ... Բայց ես վախե-  
նում եմ այնպէս... միայն դրա համար խնդրնցի,  
որ գառ... այդ... կը տեէ... կարճ, և ես քիչ  
աւելի ուրախ կը լինեմ...

Դեռ ոչ մի անգամ Յովսէփը ինձ այնպէս  
չէր թւացել, ինչպէս այսօր: Ինձ թւաց, որ այդ  
փոքրիկ այլանդակ մարմինը կամաց-կամաց հըս-  
կայ է դառնում:

Նա սկսեց խուլ կերպով հառաչել և հազար,  
մինչև որ նրա բերնից գուրս եկաւ վարդագոյն  
փրփուր: Յետոյ նա ծածկեց աչքերը և սկսեց  
ծանր շնչել, իսկ ժամանակ առ ժամանակ նա  
բոլորովին չէր շնչում: Եթէ ես չզգայի նրա չա-  
փազանց տաք ձեռների հպումը, ես կը կարծէի,  
որ նա մեռել է:

Այսպէս նստեցինք մենք մի երկու, երեք  
ժամ բոլորովին լուռ:

Ես համարեա թէ կորցը մտածելու ընդու-  
նակութիւնս. Յովսէփը խօսում էր սակաւ և մեծ  
դժւարութեամբ: Նա ասաց ինձ, որ իր վրայով  
յետից մի կառք անցաւ, սարսակելի կերպով  
ցաւեցը մէջքը, <sup>բայց</sup> որը այժմ արդէն չէ  
ցաւում. որ հայրը երեկ, աղախնուն գուրս  
վոնդեց, իսկ այսօր գնաց մի ուրիշը վնարե-  
լու...

Յետոյ, չթողնելով իմ ձեռքը, նա ինդքեց,  
որ ես կրկնեմ ամբողջ աղօթագիրքը: Ես կտա-  
րեցի նրա ցանկութիւնը, և երբ ես սկսեցի՝ «Երբ  
արշալոյսը փայլում է» \*), նա ընդհատեց ինձ.

\* ) Առաւօտեան աղօթք—երգ:

— Մի անգամ էլ ասա—«Մեր ամբողջ օր-  
ւայ աշխատանքը»...\*) Վաղը երեխ ես այլիս չեմ  
արթնանայ...

Արեք մայր մատաւ, գիշերը մի տեսակ գորշ  
էր, որովհետև ամպերի յետերից լուսաւորում  
էր լուսինը: Տանը մոմ չկար, ասենք, ես մտա-  
դրութիւն էլ չունէի վառել այն: Յովսէփը շա-  
րունակ անհանդիստ էր, նա զառանցում էր,  
միայն երբեմնակի գիտակցութեան էր գալիք:

Արդէն ուշ էր, երբ փողոցի կողմից դուռը  
մեծ աղմուկով խփեցին: Մէկը մտաւ բակը և  
սուլելով բացեց մեր սենեակի դուռը:

— Հայրիկը,—հառաչեց կուղիկը:

— Այն, որդիս,—պատասխանեց եկողը խըռ-  
պոտ ձայնով.—ինչպէս ես, ի հարկէ, աւելի  
լաւ... Այդպէս պէտք է լինի... Միշտ համարձակ,  
որդիս...

— Հայրիկ... ախր լոյս չկայ...—խօսեց Յով-  
սէփը:

— Ցիմար—լոյս... էս ով է... կանչեց նա,  
սայթաքւելով իմ կողքին:

— Ես եմ, ասացի ես:

— Հա... Դուկասի կինը. լաւ... Թնիք այ-  
սօր, վաղն էլ,—և դու ինձնից հարւածներ կը ս-

\*) Եղեկոյեան աղօթք—երդ:

տանաս... ես նահանգապետ եմ... Ռում ետ-  
մայկա...

— Բարի գիշեր, հայրիկ... բարի գիշեր...  
շնչաց Յովսէփը:

— Բարի գիշեր, բարի գիշեր, զաւակս...  
ասաց նորեկը և—կոանալով մահճակալի վրայ,—  
համբուրեց իմ զլուխը: Ես զգացի, որ թե տակ  
նա շիշ ունէր պահած:

— Լաւ քնիր, աւելացրեց նա, իսկ վաղը  
քայլը գէպի դպրոց... քայլերով մարշ... Ռում  
ետմայկա... նա բզաւեց և հեռացաւ հարկան  
սենեակը:

Այնաեղ նա ծանրութեամբ նստեց, երեխ  
մնդուկի վրայ, գլխով խփեց պատին, և մի բո-  
պէ յետոյ, լուեց համաշափ կլկոցի մի ձայն,  
կտրծես թէ մէկը մի բան էր խմում:

— Կաղիա... շնչաց կուղիկը,—երբ արդէն  
ես կը լինեմ... այնտեղ... եկ ինձ մօտ ժամա-  
նակ առ ժամանուի: Դու կասես ինձ, թէ ինչ  
դառ ոււեցին դպրոցում...

Հարկան սենեակում նորեկը սկսեց բզաւել.

— Առողջութիւն ենք ցանկանում պարոն նա-  
հանգապետին... կեցցէ... ես նահանգապետ եմ...  
Ռում ետմայկա...

Յովսէփը սկսեց ցնցւել և խօսել միշտ աւե-  
լի անհանդիստ.

— Այսպէս ցաւում է գաւակիս ոսկը...  
Կաղիա, արգեօք դու չես նստել ինձ վրայ, Կա-  
ղիա... օհ, դէ էլ մի ծեծէք ինձ...

— Մոռմ... ոռմ Եամայկա... բղուում էք  
նա հարևան սենեակում: Նորից լուեց կլկոցը, և  
յետոյ—շիշ արսափելի զրընդոցով, զարնեց  
յատակին:

Ցովսէփը քաշեց իմ ձեռքը իր բերնին, բըռ-  
նեց, ատամերով մատերս, և—յանկարծ նրանց  
թողեց: Նա այլ ես չէր շնչում:

— Պարմն,—կանչում եմ ես,—պարմն, Ցով-  
սէփը մեռաւ...

— Ի՞նչ ես դուրս տալիս,—մըթմըթաց մի  
ձայն հարևան սենեակում:

Ես վեր ցատկեցի մահճակալից և կանգնեցի  
դռան մէջ, նայելով դէպի խաւարը:

— Ցովսէփը մեռաւ... կրկնեցի ես բոլորո-  
վին դողալով:

Նորեկը աղմուկով շարժւեց մնդուկի վրայ և  
բղաւեց.

— Հեռացիր այստեղից, դնւ յիմար... Ես,  
նրա հայրը, աւելի լաւ զիտեմ, մեռաւ նա, թէ  
ոչ... Կեցցէ պարոն նահանդապետը... Մոռմ Եա-  
մայկա...

Ես սաստիկ վախեցայ և դուրս փախայ:

Ամբողջ գիշերը չկարողացայ քնել, ես  
սարսուում էի և ինչ որ երազական տեսիներ  
ինձ չարչարում էին Սուաւոտեան մեր պանփա-  
նի տէրը լաւ նայելով ինձ՝ տաց, որ ես ջերմ  
ունեմ, որ ես հաւանականաբար վարակւել եմ  
կառքի աակ մնացած Յովսէփից, և հրաժայեց,  
որ իմ գաւակի վրայ աամներկու պուլիկ զնեն:  
Այս միջոցի գործադրութիւնից յետոյ, ըստ պան-  
սինսի տիրոջ խօսքերի, հետեց այնպիսի մի  
կրիզիս, որ ես ամբողջ շարաթը պառկած մնացի  
անկողնում:

Ցովսէփի թարմանը ես ներկայ չէի, որին  
ընկերակցում էին մեր ամբողջ դասարանը ուսու-  
ցիչների և հայր-պրեֆեկտի հետ միասին: Ինձ  
ասացին, որ նա ունէր ու թաւիշեայ դադաղ,  
այնպէս փոքր, ինչպէս ջութակի արկղիկը:

Հայրը լալիս էր սարսափելի կերպով. գե-  
րեզմանի վրայ նա խեց դագաղը և ուզում էր  
փախչել նրա հետ: Բայց այնուամենայնիւ Ցով-  
սէփին թաղեցին, իսկ նրա հօրը ստիկանական  
վերակացուն և մի պոլիցիական դուրս տարան  
գերեզմանոցից:

Երբ առաջին անգամ ես կրկնն եկայ գըպ-  
րոց, ինձ ասացին, որ մի մարդ ամեն օր իմ  
մասին է հարցնում: Յիրաւի, ժամը աասնեմէ-  
կին ինձ կանչեցին:

Ես դուրս եկայ, — դուան յետելը կանգնած էր  
հանգուցեալ Յովսէփի հայրը: Նա ունէր բաց  
մանուշակագոյն դէմք և դորշ մոխրագոյն քիթ:  
Նա բոլորավին զգաստ էր, միայն նրա գլուխն  
ու ձեռները դողում էին:

Այս մարդը բոնեց իմ կղակից և երկար  
նայեց ուշադրութեամբ իմ աչքերին, և յետոյ  
յանկարծ ասաց.

— Դու էիր պաշտպանում Յովսէփին, երբ  
դաստիարակում նրան չարչարում էին...

— Այս ծերուկը գժւել է արդեօք, — մտա-  
ծեցի ես, բայց ես նրան ոչինչ չպատսխանեցի:

Նա գրկեց ձեռներով իմ վիզը և մի քանի  
անդամ համբուրեց իմ զլուխը, շնչալավ.

— Թող Աստւած քեզ օքհնէ... Աստւած քեզ  
օքհնէ...

Նա թողեց իմ զլուխը և նորից հարցրեց.

— Դու նրա մօտն էիր մեռնելիս... ասա  
ինձ ճշմարիտն, արդեօք նա շատ տանջւեց,

Յանկարծակի նա մի քայլ յետ գնաց և  
արագութեամբ ասաց.

— Կամ թէ ոչինչ... ոչինչ մի ասա ինձ...  
Օ՛, ոչ ոք չգիտէ, թէ որքան դժբախտ եմ ես...

Նրա աշքերից սկսեցին հոսել արտասուք-  
ներ: Երկու ձեռքով նա բոնեց իր գլուխը, դար-

ձաւ ինձնից և վաղեց դէպի աստիճանները  
բղաւելով.

— Ես դժբախտս... թշւառ... թշւառ...

Նա այնպէս ամուը էր բղաւում, որ ուսու-  
ցիչները դուրս եկան միջանցքը: Նոքա նայեցին  
նրան, օրօրեցին գլուխները և հրամայեցին, որ  
ես դասարան գնամ:

Երեկոյեան մի մարդ բերեց ինձ համար  
պանսիոն բաւականին մեծ մի սնդուկ, և մի  
կարտ, հետևալ զրութեամբ.

«Դժբախտ Յովսէփից՝ յիշատակ»:

Սնդուկում կային մեծ քանակութեամբ գե-  
ղեցիկ զբքեր, որոնք մնացել էին Յովսէփի մահից  
յետոյ. ի միջի այլոց կար՝ Երկրի պատմութիւնը,  
Ծեղար Կանատուի պատմութիւնը, Թոն Քիխտ,  
Դրեզդէնի Գալերէան և շատ ուրիշները: Այս  
գրքերը արթնացը իմ մէջ մի կրքոտ ցանկու-  
թիւն դէպի լուրջ ընթերցանութիւնը:

Արդէն գարուն էր, երբ ես առաջին անգամ  
գնացի Յովսէփի գերեզմանի վրայ. Նա այնպէս  
փոքր և սապատաւոր էր, ինչպէս ինքը Յովսէ-  
փը: Ես աեսայ, որ մէկը նրա շուրջը տնկել  
է կանաչ ճիւղեր: Մէ քանի քայլ հեռու, խոտե-  
րի մէջ ես գտայ մի քանի շեշեր՝ Rum Jamaica  
գրութեամբ: Ես մօտ մի ժամ նստեցի, բայց  
չասացի Յովսէփին, թէ ինչ դաս են տեղ մեզ,

որովհետև ես ինքս չգիտէի այդ, իսկ նա էլ չէր հարցնում:

Մի շաբաթ յետոյ ես նորից զնացի գերեզմանառում: Նորից ես տեսայ Յովսէփի գերեզմանի վրայ նոր տնկած ճղնիկներ, իսկ խոտերի մէջ՝ նորից ես տեսայ մի քանի ամբողջ ու կոտրւած շիշեր:

Մայիս ամսի սկզբին քաղաքում տարածւց մի անսովոր լուր: Առաւօտեան Յովսէփի գերեզմանի մօտ գտան նրա հօր տնկենդան մարմինը: Նրա կողքին ընկած էր կիսով չափ դատարկ վեց, Rum Jamaica գլութեամբ:

Բժիշկները ասացին, որ այդ մարդը մեռել է շնչերակի ուռչելուց:

Այդ դիպւածները տարօրինակ կերպով ներկործեցին վրաս: Այդ ժամանակից սկսած իմ ընկերների ներկայութիւնը ծանր դարձաւ: Ինձ համար, և նրանց աղմկալի գւարճութիւնները ձանձրացնում էին ինձ: Նոյն ժամանակ ես կամ խորասուզում էի զրքերի ընթերցանութեան մէջ, որ թողել էր ինձ Յովսէփը, և կամ ծածուկ փախչում էի քաղաքից գուրս, թփերով ծածկւած փոս տեղերը, և թափառելով այնաեղ, մտածում էի, Սատած դիտէ, թէ ինչի մասն: Յաճախ ես ինքս ինձ հարցնում էի: ինչու Յովսէփը կորաւ այդպէս թշւառ կերպով, և ին-

չու համար հայրը այն աստիճանի միայնակ էր, որ նա ստիպւած էր այնպէս կառչել իր որդու գերեզմանին:

Ես զգում էի, որ ամենամեծ գժբախտութիւնը աշխարհիս եքեսին անուշաղրութեան մատնելն է, և ես հասկանում էի, թէ ինչու խեղճ կուզգիկը ընկեր էր որոնում:

Սյօմ ես էլ ընկերոջ կարիք ունէի: Բայց իմ ընկերների մէջ որնէ պատճառով և ոչ մէկը իմ ճաշակովը չէր: Ես յիշեցի իմ քրոջը: Աշ... բոյը չէ կարող ընկերոջ փոխարինել:

Ընկերներս իմ մասին ասում էին, որ ես վայրենացել եմ, իսկ իմ պանսիոնի տէրը այլևս ոչ մի կատած չունէր այն բանի մասին, որ ես մի մեծ ոճրագործ պիտի դառնամ:

#### IV

Եկաւ վերջապէս այն հանդիպաւոր ժամը, երբ վերատեսուչը յայտարեց ամբողջ աշխարհին, որ ես ստանում եմ երկրորդ դաստրանի վկայական: Այս դէպքը լցրեց իմ հոգին ուրախ զարմանքով: Յանկարծ ինձ սկսեց թւալ, որ Զնայելով դպրոցը բարձր գասարաններ ունի, այնուամենայնիւ նրանցից ոչ մէկը այնպէս կատարեալ չէ, ինչպէս երկրորդ դաստրանը: Ես հաւատացնում էի ընկերներիս, որ միւս դասա-

բանի աշակերտները, սկսած երրորդից մինչև  
եօթերորդը, կրկնում են միայն այն, ինչ որ  
նրանք սովորել են երկրորդում. իսկ հոգուս մէջ  
վախենում էի, որ ուսուցիչները չնկատեն  
յանկարծ արձակուրդներից յետոյ, որ ես իմ  
փոխադրական վկայականը ստացել եմ սխալ-  
մամբ, և որ նրանք ինձ նորից չառնեն առաջին  
դասարանը:

Հետեւալ օրը, այնուամենայնիւ ես մի կերպ  
վարժւեցի իմ երջանկութեանը, և երբ արձա-  
կուրդների պատճառով ճանապարհին ես բա-  
յատրում էի կառապանին, որ միայն ես, ամ-  
բողջ դասարանի մէջ, ստացայ փոխադրական  
վկայական և որ իմ վկայականը ամենից լաւն  
էր: Ես թւում էի նրան այնպիսի անհեղքելի  
պատճառներ, որ նա նոյն իսկ սկսեց յօրանշել:  
Բայց երբ լսեցի, համոզւեցի երկիւզով, որ ես  
ինքս հենց լիքն եմ կասկածներով:

Երկրորդ օրը, հասնելով տուն, ճանապար-  
հին պատահեցի քրոջս՝ Սօնիային, որը դուրս էր  
վազել ինձ դիմաւորելու: Ես իսկոյն յայտնեցի  
նրան, որ ես արգէն երկրորդ դասարանումն եմ,  
և որ իմ բարեկամը՝ Յովսէփը մեռաւ, որովհե-  
տեւ կառքը նրա վրայով անցաւ: Նա ասաց, որ  
յատ էր կարօտում ինձ, որ իր հաւը արգէն

տասը ձագ ունի, որ կոմսուհուն շաբաթը երկու  
անգամ այցելում է ինչ որ մի պարոն, որ նը-  
րանք մի դաստիարակչունի ունին, որը սիրում  
է կալւածական գրադրին, և որ մեռած Յովսէ-  
փը նրա՝ այսինքն Սօնիայի համար, ըուրովին  
միևնույն է, նա շատ անտարբեր է, որովհետեւ  
Յովսէփը կուզիկ էր: Բայց այնուամենայնիւ նա  
խղճում է Յովսէփին:

Այս տելով նա մեծ օրիորդի տպաւորու-  
թիւն էր թողնում:

Հօրս ես տեսայ կէսօրին: Նա բարեկց ինձ  
շատ սրտագին, և ասաց, որ արձակուրդներին  
ինձ մի ձի կը տայ և թոյլ կը տայ արձակել մեծ  
առքանակը: Եւ յետոյ աւելացրեց.

— Անմիջապէս գնա պալատը, ողջունիր  
կոմսուհուն, չնայելով...

Յանկարծ նա թափ տւեց ձեռքը:

— Ի՞նչ պատահեց, հայր... հարցըի ես որ-  
պէս չափահաս մարդ, և նոյն իսկ վախեցայ իմ  
համարձակութեանս համար:

— Այժմ կոմսուհին կարիք չունի արդէն ծե-  
րունի լիազօրին: Շուտով այստեղ կը լինի մի նոր  
պարոն, որը նոյն իսկ ընդունակ կը լինի...

Նա ընդհատեց և դառնալով մը մաշաց առամ-  
ների միջով:

— Տարւել կալւածքը թղթախաղի մէջ...

այս Ականցի պլոր ընկնելուոր իմ բացակայութեան ժամանակ աշխատեղ մեծ վորդութիւններ են տեղի ունեցել Հայութակ դրան, և սպացի ողջ զումարն կարածածախրուհուն. Նա բնդունց ինձ միքամբ կերպով. Ես նկատեցի, որ նրա թաճծու աչքերը այսօր բորբոքն այլ պատճառութիւն ունեին. Վահան ունեցած ուժը ունեցած գիտութիւնը

**Ակրաղանալիս բակում և պատճեցի հօր և ասածի, որ կարածաքին այսուհետքախ է, իսկ ուշում նրա սպառուհիները:**  
Հայ ան Նոր, ամեն Մի կիս ամուսնութիւնից առաջ բաւ արքաւութիւն է ունենում. Ճառարակեց հայու կարծես ինը իրեն ունի ան

Այլ բոտքին պահանձնաւ մօսեցաւ մեր թեթէ կառք. Արանից դորս դատիւց ամի մարձրահասակ տղամարդ, ու միրուքով արդուու աչքերնից ինձ թւաց, որ կոմմունիս դուրս կազեց դէպի սարսանենալի, որպինում առ առաջ, ինչպէս գուան մը չից նաև սարսածեց որեպի նաև իր երկու ձեւները:

— Հայրն, որ կուտք էր իմ առջից, մեղմ ծիծաղեց ու շնչաց. առայս իսկում ունիորայի մասուն

— Հայ, հայ, աքոյոր այս ամսաթիւնն կանչիք թելափառել են. Տիքինը կարծուազին հառաչում է այս վայելչագեղ պարոնի համար, իսկ դաստիարակութիւնը կարծուազի պրադրի. Սա-

լոմէի համար, մասինք կամ ես, և կամ աւագ քահանաւ... հայ, հայ...  
ունի նույն ու ունի ամսաթիւնն էի, և շատ էի բեկ սիրոյ, մասին. Մեր այն բնկերը, որը ածիւ էր իր բեկերը և երեք տարի նստած էր առաջին գասարամում, խօսում էր մեզ հետ իր սէպի մի փոքր օրիոդ ունեցած զգացմանքների մասին, որին օրւայ մէջ մի քննի անգամ աերնում էր կամ փողում և կամ փոքրիկ պատուանի առաջ. Ասկոր ևս Էլ իշրդացն էի մի քանի շատ գեղեցիկ մէպն և շատ յաւ յիշում էմ, որչափ հոգեկան առնջանձներ էին պատճեռել, ինձ նրանց հերոսները:

Այդ պատճառով հօրս հայիւ լսելի խօսքերը ինձ գրայ անախորժ տպաւորութիւն Պողին. Ես համակատնք զգացի դէպի մեր կարածուատիւններն, ույն իսկ դէպի զանախարակչունին, բայց միւս կողմից հակակրունց դէպի սիրութառու պարոնը և կարածական գրադիրը նրբէք ես այս բոյնքանայն չէի ասի (ես ոյն իսկ չէի համարձակի մտածել այց մասին), բայց ինձ թւաց, որ մեր ափկինը, ինչպէս նուկ զաստիւ րահչունին շատ աւելի վայելուչ բան է կանչին, եթէ նրանք կարուէին... ինձ...

Հետեւալ մի քանի օրերին ևս պատեցի ամբողջ գիւղը, պարտէզը, գոմերը. Ձիով ման էի սիրացածաւասու մայրաւու նորւս և պղ

գալիս, մակոյկով զրօնում. բայց շուտով ես նկատեցի, որ սկսում եմ ձանձրանալ. Ճիշտ է, հայրս աւելի յաճախ էր խօսակցում ինձ հետ, որպէս արդէն հասակ առած մարդու հետ. Պարոն օղեգործը հրաւիրում. Էր ինձ իր մօտ հին օղի խմելու, իսկ կալածական զբագիքը իր բարեկամութիւնն էր զգիս կապում, և նոյնիսկ խոստանում էր ինձ պատմել իր հոգեկան տանջանքների մասին, որ նա կրել է դաստիարակչուու պատճառվ, բայց այդ ինձ չէր զւարճացնում. Պարոն օղեգործի հին օղին, ինչպէս նաև կալածական զբագրի հաւասարիքները ես ուրախութեամբ կը փոխարինէի մի լաւ ընկերոջ հետու եւ երբ մտքիս մէջ ես սկսեցի ընտրութիւն անել ընկերներիս մէջ, որոնք վերջացըրին ինձ հետ միասին առաջին գոնսարանը, ես համոզւեցի, որ նրանցից և ոչ մէկը չէր համապատասխանի իմ այսօրւայ հոգեկան դրութեանը:

Երբեմակի իմ հոգու խորքերից դուրս էր գալիս հանգուցեալ Յովսէֆի տխուր ստւերը և պատմում էր ինձ ինչ որ անծանօթ բաներ մի ձայնով շատ աելի մեղմ ու քնքոյշ, քան ամարային անուշ հոգը. Այն ժամանակ ինձ համակառ էր մի անծանօթ զգացմանք, և ես կարօտում էի, ինչու էլ չդիտեմ թէ ինչ բանի...

Երբ մի անգամ այգալիսի մտապատկերներիս

տպաւորութեան տակ ես թափառում էի զբուավայրի կանաչագարդ ուղիներով, անսպասելի կերպով կտրեց իմ ձանապարհը դէպի ինձ վազող քոյրս՝ Սօնիան, և հարցընեց.

— Ինչու համար մեղ հետ չես խաղում:

Մի տաքութիւն եկաւ վրաս:

— Ո՞ւմ հետ...

— Ինձ և Լօնիայի հետ:

Ինձ համար յաւիտենական հանելուկ մնաց, թէ ինչու այդ բոպէին Լօնիայի անունը իմ երկակայութեան մէջ միախառնեց Յովսէֆի երազանման կերպարանքի հետ, և ինչու ես այնպէս կարմրեցի, որ իմ դէմքը վառեկց և քըրտինք երեաց ճակատիս վրայ:

— Ի՞նչ, դու չես ուզում մեղ հետ խաղալ,

— Հարցընեց զարմացած քոյրս: Զատկին այսուեղ էր երրորդ գասարանից մի աշակերտ, և նա բոլորովին այնպէս հաղարտ չէր, ինչպէս դու: Ամբողջ օրը նա զրօնում էր մեղ հետ:

Եւ կը կին առանց պատճառի ես ատելութիւն զգացի դէպի այդ երրորդ գասարանի աշակերտը, որին ես երբէք չէի տեսել: Վերջը ես կոշտ տոնով պատասխանեցի Սօնիային, չնայելով հոգուս մէջ ես ոչ մի վիրաւորական բան չէի զգում դէպի նա:

— Ես չեմ ճանաչում այդ Լօնիային:

ինչպէս թէ ցես հանաչում։ Զես յիշում,  
ինչպէս երա պատճառով քեզ ծեծում էր նուխ-  
կին դաստիարակչութիւն։ Եւ միթէ զու մառացը  
ես, որ Լօնիոն լալիս էր և խնդրում, որ քեզոչ  
մի վատ բան չանեն, երբ այրւեցայն... գո-  
միկը։

Հասկանալի է, որ ես ամեն ինչ, և ամենից  
էլ լաւ Լօնիային էի յիշում։ Բայց պէտք է խոս-  
տովանեմ, որ քըոջս յուշագիտական ընկունա-  
կութիւնները ինձ զայրացնում էին։ Իմ հոգա-  
զգեստիս վեհութեանը անպատշաճ թան էր թը-  
ւում, որ գիւղում ապրող սարդիկ, և յանդաւ-  
պէս այդ հաստեղնալ սկսող աղջիկները, այդ-  
պիսի լաւ յիշողութիւն ունեին։ Սյդ զգացմունքների ապաւորութեան տակ,  
ես պատասխանեցի ինչպէս մի սնօթադաքաջարի  
մարդ։

Է՞ն, թող ինձ հանգիստ... պու, քի կանի  
այսիւ։

Եւ ես ճամբաս ուզգեցի գէպի պարտէզի  
խորքը, հաւանարապէս զժկոն ինչպէս քրոջս ան-  
ժամանակ յիշողութիւնների, նոյնպէս նոն ան-  
բանի պատճառով, որ ես չեմ խաղում առջրից  
ների հետ։ Ասենք ես էլ չփառեմ, թէ ինչ էր ու-  
զում, բայց ես այնպէս բարկացայ, որ երբ Մօ-

Կերպին պապահեցի պանք, ունեմ ուզում խօսել  
իրա հետ։ Եւ դդմանա միարացը ոյ ոչ նույն  
րողա Կշացած քոյրս պշտառում էր խուսափել  
իմ աշքերից բայց այդ ժամանակ ես փնտրում  
էի զրան, զգալիվ, որ մի բան է պատահում ինձ  
և որ մետին խաղալու հարցը ես բարորովին  
սխար եի գրի։ Այդ պատճառով զրութիւնը բար-  
ուը եւ համար, երբ վշտացած Սօնիան սկսեց  
մի ինչ որ բան կարկատել, ես փերցի արտզու-  
թեամբ առանց ընտրութեան մի գերք և մի քա-  
նի բրուկ թերթեալուց յատոյ, զեկը այն սեղանի  
վրայ սակելով իբր թէ ինքո ինձ։

— Թոլոր աղջկերը յիմտրներ են։ Այս  
Սկզբում ինձ թւաց, որ այս աֆօրիզմը  
պէտք է խելացի մինի։ Բայց հազիւ ես սասցի  
վեզացոի այն զգացի, որ նրա մէջ ինչ որ ան-  
ձացակ մի բան կայ։ Ես սկսեցի զկչալքը ջա-  
հասցրած վիրաւորանքի համար, և ամաչեցի...  
Եւ առանց մի խօսք սկելու, ես համբուրեցի  
Սօնիայի երկու թշերը և ճամբայ ընկույն զէպի  
մաստաբը։

Աստւած իմ, ինչպէս զժքակատ էի ես ինձ  
զգաւ մայդ օրը... Այսուամենայիւ այդ միայն  
սկիզբն էր իմ տանջանքների։

Ես չեմ ուզում ոչինչ թագցնեմ։ Ամբողջ զի-  
շերը ես երազում էի միայն Լօնիայի մասին, և

այդ օրւանից սկսած կուզեկի փոխարէն ես տեսնում էի իւ երազային տեսիլների մէջ Լօնիայի ստեղը։ Թւում էր ինձ, որ միայն նա կարող էր լինել այն բարեկամը, որին վաղուց ի վեր ես կարիք ունեմ։ Անուրջներիս մէջ ես խօսում էի նրա հետ այնպէս երկար և այնպէս գեղեցիկ, ինչպէս գրում են վէպերի մէջ, և ես այնպէս քաղաքավարի էի, ինչպէս մի մարքիզ։ իրականութեան մէջ, նոյնիսկ ես ընդունակ չէի զնալ պարտէզը, երբ այնտեղ խաղում էին աղջկերքը, որոնց ուրախ ծիծաղը, միախառնւած դաստիարակչունու յորդորների հետ, ես լսում էի պարտէզի յետեկից։

Ես լսւ յիշում եմ այն տեղը, ուր գուրս էին նետում սովորաբար պալատից աւլած աղբը, և ուր աճում էին բարձր եղինջներ և կռատուկներ։ Ես կանդում էի այգտեղ յաճախ մի ամբողջ քառորդ ժամ լսելու համար, թէ մի քանի ոչ պարզ նախադասութիւններ, թէ նեղ ուղիներով քայլող նրանց կօշիկների ձայնը, և թէ տեսնելու համար Լօնիայի արագ շարժւող շրջազգեստը երբ նա թուշկոտում էր թոկի վրայով։

Մի ըոսէից ամեն ինչ լուսում էր պարտէզում, և այն ժամանակ ես զգում էի արեի կիզիչ տաքութիւնը և լսում էի աղքակոյտի վրայ վիտացող ճանձերի անվերջ բզոցը։ Յետոյ ա-

կանջներիս էին հասնում ծիծաղների և վաղեկ արձագանքները. տախտակէ ցանկապատի ճեղքի մօտից արագ շարժւում էին շրջազգեստները, և զարձեալ բոլորի վրայ իշխում էր ծառերի խըշ-խշոցը, թոչունների ծվվոցը, շոգը. իսկ աներես ճանձերը համարեա մտնում էին բերանս։

Յանկարծ լսեց պալատի կողմից մի ձայն.

— Լօնիա... Լօնիա... սենեակ արի...

Ահա և դաստիարակչուհին։ Ես կատէի նրան, եթէ չգիտնայի, որ նա նոյնպէս տիսուր է։

## V

Դէպի տախտակէ ցանկապատը ունեցած իմ էկոկուրսիաներից մէկի ժամանակ ես համոզւեցի, որ ես միայնակ չեմ։ Իմ բարձր տեղից ես նկատեցի կանաչ և խիտ կռատուկների մէջ հնութիւնից գորշացած մի ծղոտէ զլխարկ, որի վերին մասից երեսում էր մի ինչ որ տղայի բաց-շիկահեր մաղափունջը, որովհետև զլխարկը տակ չուներ։

Երբ ես մի քանի քայլ արի այդ ուղղութեամբ, մազափունջը և զլխարկը բարձրացան կռատուկից վերև, և երևաց եօթ, գուցէ և ութ տարեկան մի տղայ, երկար, կեղտոտ և վզի մօտ թելով ձգւած շապէի մէջ։ Ես ուզեցի խօսել նրա հետ, բայց տղան յանկարծ բարձրացաւ և փա-

իմաւ արագ, ինչպէս նապատակ, զաշտի ուղղութեամբ: Համագիտածին կարմիր օձիքը և արծաթեզօծ կոճակները ընդհանրապէս ուժեղ տըլպաւորութիւն էին թողնում զիւղացի Նընթանին ընդհանր առաջ գրայի որդին առաջ գրայի:

Կամացուկ ես հեռացայ կալւածային շինութիւնների ուղղութեամբ: Միաժամանակ աղան մօտեցաւ տախտակէ ցանկապատին: Երբ ես թագնում էի շինութեան յետեւ, նա բարձրանում էր աղբանզղը և դնում էր աչքը ճիշտ այս ճեղքին, որտեղից պս էի նայում պարտէզը: Ես շատ եմ կասկածում նրա մի բան տեսնելու մասին, բայց նա անդադար նայում էր:

Երբ հետիւալ օրը ես եկայ նոյն տեղը օրիւ որդիների խաղը գիտելու համար, նորից ես տեսայ կոտուկների միջն գորշակոյն զլխարկը, նրա վերեի մասում բացիկագոյն մազափունջը, և բոլորքը պատռած զլխարկի եզրի տակից դէպի ինձ յառած մի զոյդ աչեր: Որովհետեւ արեգակը շատ էր այրում, աղան պոկեց կամացուկ կուտուկի մի մեծ տերե, և պաշտպանեց նրանով, ինչպէս հովանոցով: Այս ժամանակ ես տիլ ևս չէր տեսնում նրա զլխարկը, և ոչ էլ մազափունջը, նկատելի էր միայն զորշ գոյնի և կրծքի վրայ թեթեւ բացւած շապիկը:

Երբ ես հեռացայ, աղան կրկին վազեց դէ-

զամո և ներշնչաց զնաւագույքը շնչառական պի աղբակոյտը և նորից, ինչպէս երեկ, որեց աշքերը ճեղքին, երեկ մտածելով, որ զուցէ այս անգամ ես չեմ կարողացել նկատել պարտիզում գանոսդ բոլոր աշքի ընկած բաները:

Սյու բոպէին ես ըմբռնեցի իմ արարմունքների ծեծաղելի լինելու: Գեղցիկ պատմութիւն կը լինէր, եթէ հայրս, կամ պարզն օդեղործը, և կամ նոյնիսկ Լօնիան նկատէին, որ ես, երլը որդ գասարանի աշակերտս իմ համազգեստով կանչ նում եմ շարունակ աղբատեղում տախտակէ ցանկապատի մօտ, ճերթով փոխարիներով տեղամի հովական կանգիտապի ենա, որի շամիկը կուցէ երբէք լացւած չէ եղել:

Ես ամաշեցի: Միթէ ես իրաւունք չունեմ ափաշկուրայ մանել պարտէզը, առանց թագւելու անկիւններում, ինչպէս այդ տղան իր չորս բոլորքը պատռած զլխարկով...

Աղբատեղը և տախտակէ ցանկապատի և զքը զգւելի դարձան ինձ համար, բայց միենոյն ժամանակ իմ մէջ արթնացաւ մեծ նետաքրագրութիւն, և մի է այդ տղան: Նրա հասակի երիշուները արդէն սազեր են արածացնում, բայց նա անց է կացնում անօգուտ կերպով իր ամենագեղեցիկ հաւելութիւնը, թափառելով կալւածի բազ յետեռում, լրտեսում է արթների դործերը, և երբ հարց ես տալիս, կանոնաւոր պատասխանելու

փոխարէն երկչոտութեամբ փախչում է օտար  
մարդուց:

Սպասիր, —մտածեցի ես, —զու այլու  
ինձ չես տեսնի այստեղ, բայց զբա փոխարէն,  
ես կը հետազոտեմ, թէ զու ով ես: Ես յիշում  
եմ, որ վէպերի մէջ հերոսներից և հերոսուհի-  
ներից բացի այդպիսի առեղծւածային անծանօթ-  
ներ են լինում, որոնց վերաբերմամբ պէտք է  
զգոյշ լինել և իր ժամանակին թուլացնել նրանց  
ինտրիգները:

Մի քանի օրից յետոյ, առանց որևէ է մէկին  
հարցնելու, ես իմացայ ամեն բան այդ խորհրդ-  
պաւոր անծանօթի մասին: Նա ինտրիգան չէր:  
Նա Վալիկին էր, պալատական ամաններ լւացող  
կող որդին, բոլորը նրան ճանաչում էին, բայց  
ոչ ոք նրանով չէր զրադւում: Այդ պատճառով  
տղան շատ աղատ ժամանակ ունէր, և, ինչպէս  
ես այդ փորձով՝ իմացայ, գործադրում էր այն  
ուրիշների համար, ոչ հաճելի եղանակով:

Վալիկը երբէք հայր չէ ունեցել, այդ պատ-  
ճառով բոլորն էլ ճանձրացնում էին նրա մօրը,  
որը դիւրազրդիր մի կին էր: Ծառայողների  
սուր ակնարկներին ամաններ լւացող կինը պա-  
տասխանում էր բղաւոցով և հայիոյանքներով, և  
որովհետև այդ, ըստ երևոյթին, նրան չէր բա-

ւականացնում, նացածը թափում էր Վալիկի  
գլխին:

Տզան զեռ չորբոտանու պէս սողում էր, հա-  
գած ունէր մի շապիկ, ծոծրակի վրայ կապած  
մի հանգոյցով, որը այնպիսի տպաւորութիւն էր  
թողնում, կարծես նա բոլորովին առանց շապկի  
է, նբան արգէն անւանում էին ընկեցիկ:

— Նրան զու գտել ես, — հարցնում էին  
այդպիսի գէպքերում մօրը. իսկ նա բղաւում էր:

— Աստւած պատժի քեզ իմ մեղքերի հա-  
մար... Ուներդ ու ձեռներդ ծուեն քո... Զքա-  
նաս զու, շան լակնտ...

Վերջին ցանկութիւնները վերաբերում էին  
Վալիկին, որը յետոյ անմիջապէս շապկի հան-  
գոյցի վերևից ոտի հարւած էր ստանում: Երե-  
խան, քանի զեռ անխելք էր, այդպիսի հիւրասի-  
րութիւններին պատասխանում էր զառը լացովէ  
Բայց երբ նա աւելի խելացի դարձաւ, որը բա-  
ւական շուտ կատարեց, այն ժամանակ նա լուսմ  
էր ճագարի նման և սովորաբար սողում էր փայ-  
տէ մահճակալի տակը, մեծ տաշտակք յետել,  
որտեղ խոզերին կերակուր էր տրւում: Ինչպէս  
երեսում է, նա չէր ցանկանում, որ իր վեայ  
եռացրած ջուր թափեն, ինչպէս մի անգամ այդ  
պատահեց նրա հետ:

Պատահում էր, որ Վալիկը նստում էր փայ-

աէ մահճակափի տակը ամբողջ ժամերով, մինչև  
որ հաւաքը ու մարդիկ ճաշելու կամ ընթ-  
րելու համար: Մի անգամ տեսնելով փայտեայ  
մտհճակափի տակըց գուրս ցցած երեխայի գլու-  
խը և նրա աշեքը, որոնց մէջ փայտում էին  
թարմ ցաւից առաջացած արցունքները և դէպի  
թմորտնշերը ունեցած նետաքրքրութիւնը, կար-  
և ածական ծառայողները հարցը ին մօրը:

— Եւ ոչինչ չէ տալիս նրան, որին գու  
զուի ևս զիսնախնձորների մէջ գոյնուք զսիսբառ

— Թող նա ձեզ հետ մրամբն զնայ կետի-  
նը կ'ընէ... Պատասխանց գուշաց կ'ուժն, չնայելով առաջ մտադրւել էր հերտեսել վաղի-  
կն, այժմ ոչինչ էլ չաւեց նրան ուսմանը:

— Զի կարենի! թոյն տառ, որ այդ նրան,  
որը չնայելով ըսկեցիկ է, սեռնի քաղցածութիւ-  
նից, — համազում էրն նրան ուրիշ կանայք, առա-

— Հենց այդ պատճառով էլ նա ոչինք մտա-  
կի, ձեր ջղու, որ դուք այդպէս ծաղրում եք...

Եւ որովհետեւ նա սստած էր կոմի վրայ,  
մէջը կիսով չափ դարձրած դէպի փայտէ մա-  
ճակալի, այդ պատճառով Լոլիկը առաներին  
շարունակ կրունկների հարւածները էր բնտա-  
նում:

Այն ժամանակ ծառայողները, մօրը բար-  
և այս ցնաւուար  
լու ու նորուած զիմանի որ զի նախաւար

կացնելու համար, հանում էին նըան իր թագու-  
տովից և ներակրում:

— Նու, կալիկ, — առում էր նրանցից մէկը,  
— համբուրիր շան պոչը, և դու խմբագնդեկներ  
կը ստանաս:

Տղան ամեն անգամ էլ ճշտութեամբ կատա-  
րում էր հրամանը, և դրա համար էլ նու վանում  
էր, նոյնիսկ առանց ծամելու, մեծ-մեծ խմորա-  
գնդերը:

— Հապա, խմիր մի անգամ մալիքիդ գու-  
խն, այն ժամանակ զու կաթ էլ կը ստանաս...

— Ծի չորանան քո ծեռները — բղաւում էր  
ամաններ լացող կինը, նոկ տղան փախչում էր  
աշշատակի յետեր:

Մի անգամ, հալով, վախեցած, նա վազեց  
կալւածի բակը և թագուեց խիտ թփերի մէջ, որոնք  
բակէ էին պալատի դիմաց: Երբ նրա արցունքները  
չորացան, նա նախասենեակում տեսաւ մի  
գեղեցիկ սեղան, կողքին երկու տթոռ, նրանց  
վրայ նստած Լոնիային և քրոջս, որոնց սպա-  
սուին զորնոց էր կապում կզակի տակը, Սա-  
լօմէան ապուր էր լցնում, իսկ կոմսուին, աչ  
սում էր.

— Փշեցէք երեխաններ, տաք է, չայրէք, չը-  
կեղուուեք... գուցէ բաւականի քննցը չէ...

Երբ կալւածի ծառայողները նեռացան ի-  
ցնուածուած քամար ու նազ վահ վահ ուղիղ

բենց աշխատանքի յետևից և խոհանոցում ոչ ոք չկար, ամաններ լւացող կինը դուրս եկաւ բակը և կանչեց.

— Վալիկ... Վալիկ... այստեղ արի...

Կանչելու եղանակին նայելով տղան հասկացաւ, որ կարող է ներս մտնել, և վազեց խոհանոցի ուղղութեամբ։ Այնտեղ նա, ըստ սովորականին, ստացաւ մօրից մի կտոր հաց, մի փայտէ գդալ և մի ահագին բլիւզի մէջ, որից վեց հոգի էին կերակրւում, — մի քիչ բօրշչ։ Նա նըստեց գետնի վրայ, մայրը այդ ահագին բլիւզը պահեց սրունջների միջև, և, ուղղելով նրա շապիկը ուսերի վրայ, ասաց.

— Եթէ դու մի անգամ էլ համբուրես շան պոչը, ես քո բոլոր ոսկըները կը համարեմ։ Ցիշիր այդ։

Այս ասելով նա գնաց լւանալու խոհանոցի ամանները։

Շուտով, կարծես թէ գետնի տակից, դուրս եկաւ բակի շունը և նստեց տղայի զիմաց։ Սկզբում, ատամները շխնչխացնելով, նա քշեց ճանճերին, յօրանջեց, և սկսեց լիդել բերնի չորս բոլորքը։ Ցետոյ նա հոտոտեց բօրշչը մի անգամ, երկու անգամ և զգուշութեամբ ընկզմեց նրա մէջ իր լիզուն։ Վալիկը խփեց գդալով նրա զրւին։ Շունը մի քայլ յետ գնաց, նորից յօրանջեց

և նորից չփշփացնելով՝ սկսեց խմել մի քանի կում, մի քիչ աւելի համարձակ կերպով։ Այնուհետեւ տղան կարող էր արգէն գդալով խփել նրա գլխին, լնչքան իրեն պէտքն էր, որովհետև շունը, ախորժակը զրգուելով, այլևս ոչ մի գնով բերանը չէր հեռացնում։ Ամանից։ Բայց Վալիկն էլ նկատեց, որ նա է աւելի արդարացի, ով առաջինը կը լինի ուտելու մէջ։ և սկսեց ուտել նոյն խոկ հեալով, բլիւզի մի կողմից, իսկ շունն էլ չփշփացնելով խմել միւս կողմից։

Եթէ մայրը լաւ տրամադրութիւն էր ունենում, և Վալիկը մօտն էր լինում, այն ժամանակ նա ստանում էր անուշեղէն պալատական սեղանից։

— Առ, վերցրու, ուրախացիր, — ասում էր մայրը, տալով նրան կարկտնդակի մի կտոր, սուսով կեղառուած մի ափու, ձկան զլուխ, ամբողջովին չկրծած մի թռչնաթի, և կամ մի բաժակ, որի յատակին դժնուում էր մի քիչ սուրճ և չլուծւած շաքարի մնացորդ։ Երբ նա բոլորը ծծում, վերջացնում էր բաժակից, և կամ մաքուր լիզում, մաքրում էր ափսէն, մայրը նրան հարցնում էր.

— Հը, լաւն է։

Այն ժամանակ Վալիկը գնում էր ձեռները զաւակին, ինչպէս անում էին կալւածական ծա-

ուայրդները ճաշից յետոյ, խորը շնչում էր, մի կողմ հրում իր հին զլխարկը և պատասխանում,

— Հիմա որ, փառք Աստծու, մի քիչ բան կերայ... պիտի գնալ աշխատանքի...

Նա թողնում էր խոհանոցը և գնում էր որևէ տեղ ամբողջ կէս օրով:

Իր խաղերը նա յարմարեցնում էր այն բանի հետ, թէ ինչ են անում աւելի հաստկաւորները: Հերկման ժամանակ նա հանում էր տաշտի յետեկից իր մտրակը, ձեռքն էր վերցնում հենց առաջին պատահած ցանկապատի մի ցից և կամ որևէ տապալւած ծառի արմատ և հերկում էր ամբողջ ժամերով, ի հարկէ օրորւելով միենոյն տեղում, և կանչելով.

— Եզնէր, հա, հա հա:

Եթէ ձուկ էին բռնում, նա փնտրում, զըստնում էր աղբի մէջ մի հին մաղ և, առանց յոդնելու, մեծ համբերութեամբ ընկղմում էր այն ջրի մէջ: Կամ նստում էր ձեռնափայտի վրայ, քշում էր ձիերին ջուր խմեցնելու համար դէպի ջրհորը: Մի անգամ, գտնելով ոչխարների փառախի մօտ կեղևաթաղանթից պատրաստած մի հին կօշիկ, ձգեց ջրի վրայ, և այդ եղանակով զրօսանք կատարեց մակոյկով,—ի հարկէ իր երեակայութեան մէջ:

Մի խօսքով, նա զւարճանում էր հիանալի կերպով, բայց երբէք չէր ծիծաղում: Նրա մանկական դէմքի վրայ գծագրել մնացել էր անշնչելի լրջութեան արտայայտութիւն, որին երբեմն միայն փոխարինում էր վախը: Նրա մեծաչքերի մէջ նկատելի էր յաւիտենական զարմանք, ինչպէս այն մարդկանց մօտ, որոնք երկար տարիների ընթացքում չէին տեսել անլուր և ատարօրինակ բաներ:

Վալիկը կարողանում էր ճարպիկութեամբ դուրս գալ տնից ամբողջ օրերով: Եւ կալւածական ծառաները չէին զարմանում, երբ առաւտեան գտնում էին նրան դէզի մէջ և կամ անտառում ծառի տակ: Նա կարողանում էր կանդնել դաշտի մէջ երկար ժամանակով, բոլորովին անշարժ, ինչպէս մի գորշ սիւն, և բերանը բաց նայել, չբխտես, թէ ուր: Ես նրան մի անգամ գտայ այդ զրութեան մէջ, և բաւականի մօտ լինելով, ես լսում էի, թէ ինչպէս նա կամացուկ հառաջում էր:

Զգիտեմ, թէ ինչու այդպիսի մի փոքրիկ արարածի հառաջանքը ինձ սարսափեցրեց: Ես զգացի ինչ որ կշամքանք անյայտ մէկի դէմ, և միենոյն ժամանակ սկսեցի մի քիչ սիրել Վալիկին: Բայց երբ քիչ աւելի համարձակ քայլ արի դէպի նա, տղան կարծես արթնացաւ և

կայծակի արագութեամբ փախաւ, մտաւ թվերի  
մէջ:

Այն ժամանակ իմ զլխում մի տարօրինակ  
միտք յղացաւ, որ Աստւած, որը միշտ նայում  
է այդպիսի երեխաների, պէտք է որ տխուր  
դէմք ունենայ: Ես նոյնպէս հասկացայ, թէ ինչ  
չն սուրբ պատկերների վրայ Նա, այդ Աստ-  
ւածը, ներկայացւած է միշտ լուրջ կերպարան-  
քով և թէ ինչու եկեղեցիներում պէտք է խօ-  
սել շատ ցոծր և քայլել ուների ծայրերի վրայ:

Ահա այդպիսի մի չնչին մարդուկ պատճառ  
դարձաւ, որ փոխանակ թագնւելու տախտակէ  
ցանկապատի յետեր, ես սրոշեցի ոյցելին պար-  
ուէզը, նախօրօք յայտնելով Սօնիային, որ սրա-  
նից յետոյ ես կը խաղամ միտոին—նըս և Լօ-  
նիայի հետ:

Հասկանալի է, որ այս պըօէկտը հիացրեց  
քրոջս:

— Դու պարտիդում եղիր այն ժամանակ,  
— ասաց նա, — երբ մենք երկուս դուրս կը  
գանք զրօննելու: Բարեկիր նոյնպէս դաստիարակ-  
չունուն, որը շարունակ գրեթէ է կարդում պար-  
տիկի զրուցարանում, բայց նրա հետ երկար մի  
զըուցիր, որովհետեւ նա չի սիրում, երբ իրեն  
խանդարում են: Եւ յետոյ կը տեսնես, թէ ինչ-  
պէս մենք կուրախանանք:

Նոյն օրը ճաշին նա ասաց ինձ դէմքի խոր-  
հրդաւոր արտայայտութեամբ.

— Արի ճիշտ ժամը երեքին, ես արդէն  
Լօնիային ասացի, որ զու մեղ հետ կը լինեաւ  
երբ մենք դուրս կը գանք պալատից, ես կը հա-  
զամ...

Քոյրս ինչ որ գործ էր սկսել, իսկ ես, ի  
հարկէ, դուրս եկաց, որովհետեւ, ճիշտն ասած,  
ես երբէք էլ հաճոյքով սենեակում չէի մուռմ:  
Ես արդէն նախոսնեակումն էի, երբ Սօնիան  
դուրս վաղեց իմ յետելից.

— Կապիս, Կապիս:

— Ի՞նչ է...

— Երբ ես կը հազամ, զու կը հասկանմաս,  
թէ այդ ինչ է նշանակում... — ասաց նա հանդի-  
սաւոր կերողով:

— Ի հարկէ:

Նա վերադառն սենեակը, բայց զեռ պա-  
տումանից կանչում էր ինձ.

— Ես կը հազամ... յիշիր:

Եւ ուր պիտի զնայի ես, եթէ ոչ պարտէ-  
զը, չնայելով մինչև որոշւած ժամը դեռ մէկու-  
կէս ժամից աւելի կար: Այնպէս խորասոված  
էի մաքերիս մէջ, որ չպիտեմ, արդեօք այդ  
որիէ թոշուն երգեց պարտիզում, որը սովո-  
րաբոր շատ կենդանի էր լինում: Մի քանի ան-

դամ պատեցի, վագելով նրա շուրջը, իսկ յետոյ նստեցի ափից կապած մի մակոյէլ մէջ, և թիավարել չկարողանալով՝ դոնէ ձանձրոյթից օրօրւում էի նրա մէջ։

Ես խորհում էի, թէ ինչ ձեռվ վերանորոգեմ իմ ծանօթութիւնը Լօնիայի հետ։ Այդ պիտի կատարէք հետևեալ եղանակով։—Երբ Սօնիան կը հազայ, ես, գլուխո կախ, դուրս կը դամ կողքի ճանապարհից դէպի զլխաւոր ծառուղին...

Այն ժամանակ Սօնիան կասի.

«Նայիր, Լօնիա, ահա իմ եղբայրը, պարոն Կազիմիր Լեսնիկովին, երկրորդ դասարանի աշակերտ, այն թշւառ Յովսէփի ընկերը, որի մասին ես այնչափ քեզ հետ խօսել եմ։»

Լօնիան այն ժամանակ ուերանո կանի, իսկ ես, հանելով զլխարկս, կասեմ։

«Հաղուց արդէն մտադրութիւն ունէի»... Ոչ, այսպէս լաւ չէ. «Վաղուց արդէն ես ցանկանում էի վերանորոգել ձեզ հետ, օրինդ...» օհ, ոչ, - աւելի լաւ կը լինի այսպէս. «Վաղուց արդէն ես ցանկանում էի արտայալուլ ձեզ իմ յարգանքները...»

Այն ժամանակ Լօնիան կը հարցնի.

«Դուք, պարոն, վաղուց է, որ մեր կողմերն էք մուռմ...» Ոչ, նա այսպէս չի ասի, այլ

այսպէս. «Հանձելի է ինձ համար, ձեզ հետ ծանօթանալը, պարոն. Սօնիան շատ է պատմել ինձ ձեր մասին»։ Եւ յետոյ ինչ... յետոյ... ահա թէ ինչ. «Չէք ծանձրանում արդեօք մեր կողմերում. չէ որ դուք վարժւել էք մեծ քաղաքի»։ Իսկ ես կը պատասխանեմ. «Ես ծանձրանում էի մինչև այն ժամանակ, երբ ձեր ընկերութեան մէջ չէի, օրիորդ...»

Այդ ըոպէին կողքիս ջրի մէջ շարժւեց մօտ կէս կանգուն երկարութեամբ մի զայլաձուկ... Այդ իրականութեան առաջ անհետացան իմ անուբջները: Խնչպէս, այստեղ, այս լճակում, այդ պիսի ձկներ կան, իսկ ես կարթ չունեմ...»

Ես արագութեամբ բարձրացայ մակոյկից, գնալու և ստուգելու համար, արդեօք տանը կարթ ունեմ, և — քիչ մասց, պիտի դիպչէի Լօնիային, որը հենց նոր էր կամենում ցատկել կարմիր թոկի վրայով։

Ձկները, կարթերը, հանդիսաւոր ծանօթութեան ծրագիրը, — բոլորը, բոլորը միանգամբ խառնւեց զլխիս մէջ։ Ահա այս էլ քեզ գայլաձնւկ... Ես նոյնիսկ մոռացայ բարեկել Լօնիային, գեռ աւելի վատ, որովհետեւ ես մոռացայ նոյն իսկ խօսելը։ Ահա, քեզ գայլաձուկ...»

Լօնիան մի հրաշալի շիկաներ աղջիկ էր, կանոնաւոր գծագրւած բերան ունէր, որը ամեն

բոպէ մի զեղեցիկ ձև էր ստանում. նա նայեց ինձ  
վերեկց, և յետ նետելով իր առատ գանգուրները,  
հարցրեց ինձ պարզ կերպով.

— Ճիշտ է, որ դուք ծակեցիք իմ մակոյկը:  
Ե՞ս...

— Այդպէս ասաց ինձ պարտիզանը. այժմ  
էլ մայրիկը թոյլ չի տալիս մեզ մակոյկով զբոս-  
նել և հրամայել է կապել մակոյկը ափին և  
թաղնել թիւըը:

— Բայց հաւատացէք, հայրիկիս արեց վը-  
կայ, ես չեմ ծակել մակոյկը, — արդարացրի ինձ,  
ինչպէս մեր գլուխի վերատեսչի առաջ:

— Բայց միթէ այդ ճիշտ է, — հարցրեց  
Լօնիան, սուր նայելով իմ աչքերին: — Որովհետե-  
գուք, երիտասարդ պարոնիկ, ինձ թւում է, ըն-  
դունակ էք այդպիսի բան անելու...

Այդ փոքրիկ օրիորդի խօսելու եղանակը  
դուք չեկաւ ինձ: Գրողը տանի, իմ ընկերներից  
ամենաուժելին անգամ չէր համարձակուի այդ-  
պէս խօսել ինձ հետ:

— Եթէ ես ասում եմ՝ ոչ, նշանակում է  
բոլորսին ծիշտ է... պատասխանեցի ես ուժեղ  
կերպով շեշտելով ճիշտ բառը:

— Այդ գէպքում պարտիզանը սուտ է  
խօսել, — առարկեց Լօնիան կիտելով յօնքերը:  
— Նա լաւ է արել, — պատասխանեցի ես, —

որովհետեւ երիտասարդ օրիորդները մակոյկով  
լողալ չկիտեն:

— Իսկ զուք կարողանում էք, երիտասարդ  
պարոնիկ:

— Ես գիտեմ լողալ թէ մակոյկով, և թէ  
ձեռներով, նոյնպէս մէջքիս վըայ պառկած,  
կամ կանգնած:

— Դուք կարող էք մեզ տանել ման ածել:

— Եթէ ձեր մայրը թոյլ տայ, այն ժամա-  
նակ ես այդ կանեմ:

— Այն ժամանակ, նայեցէք, երիտասարդ  
պարոնիկ, արդեօք մակոյկը ծակւմծ է մի տե-  
ղից:

— Նա ծակ չունի:

— Բայց որտեղից է միջի չուրը:

— Անձընից:

— Անձընից:

Մեր խօսակցութիւնը ընդհատւեց: Այնու-  
ամենայնիւ ես շահւեցի այնչափ, որ համարձակ  
կերպով նայեցի Լօնիային, և որչափ գործը այժմ  
պատկերանում է ինձ, նա բոլորովին ինձ չէր  
յարգում: Ընդհակառակը, առանց հեռանալու իր  
տեղից, նա սկսեց ցատկել թոկի վրայով, ժամա-  
նակ առ ժամանակ խօսելով ինձ հետ:

— Ինչու համար դուք չէիք խաղում մեզ  
հետ:

- Որովհետեւ ես զբաղւած էի:  
 — Ի՞նչ էք անում դուք  
 — Ես սովորում եմ:  
 — Արձակուրդների ժամանակ չե՞ որ ոչ ոք  
 չի սովորում:  
 — Մեր դասարանում պէտք է սովորել  
 նոյն իսկ արձակուրդների ժամանակ:  
 Լօնիան երկու անգամ ցատկեց թռկի վրա-  
 յով և ասաց.  
 — Ադիկը չորրորդ դասարանումն է, այնու-  
 ամենայնիւ տօներին նա չէր սովորում: Ահ,  
 իսկապէս... դուք Ադիկին չէք ճանաչում:  
 — Ո՞վ ասաց ձեզ, օրիորդ, որ ես նրան  
 չեմ ճանաչում, — հարցրի ես հպարտութեամբ:  
 — Որովհետեւ դուք, երիտասարդ պարոնիկ,  
 առաջին դասարանումն էիք, երբ նա երրորդումն  
 էր...  
 Նորից նա երկու անգամ ցատկեց թռկի  
 վրայով. — Ես զգացի, որ ինձ հետ ինչ ոք տար-  
 օրինակ բան պիտի պատահի:  
 — Ինձ հետ չորրորդ դասարանը նոյն իսկ  
 յարաբերութիւններ ունէր, — առարկեցի ես զայ-  
 րացած:  
 — Միենոյն բանն է, որովհետեւ Ադիկը սո-  
 վորում է Վարշաւայում, իսկ դուք... դուք ոք  
 քաղաքումն էք սովորում, որտեղ...

- Սեղեցում, — հազիւ պատասխանեցի ես  
 շածք ձայնով:  
 — Ես էլ պիտի դնամ Վարշաւա, — ասաց  
 Լօնիան և աւելացրեց.  
 — Գուցէ, երիտասարդ պարոնիկ, Սօնիային  
 կամքը, որ ես այսուեղ եմ...  
 Եւ առանց սպասելու իմ համաձայնութեանը  
 կամ անհամաձայնութեանը, նա վազեց գէպի  
 զրուցարանը, շարունակ ցատկուելով:  
 Ես, կարծես թէ անզգայացել էի, չէի կարո-  
 ղանում հասկանալ, այդ աղջիկը ինձ ինչի տեղ է  
 դնում:  
 — Հանգիստ թողէք ինձ դուք ձեր զւար-  
 ձութիւններով, — մտածեցի ես իսկապէս բարկա-  
 ցած. — Լօնիան անքաղաքավարի, անշնորհք փրկու-  
 քուն է...  
 Վերնի նկատողութիւնները այսուամենայնիւ  
 չէին խանդարում ինձ կատարելու իսկոյն նրա  
 հրամանը: Ես դնացի տուն շատ արագութեամբ,  
 նոյնիսկ չափազանց արագ, հաւանական է ներ-  
 քին յուզմունքից:  
 Սօնիան արդէն վերցրել էր իր հովանոցը  
 պարէզ գնալու համար:  
 — Նու, — ասացի ես նետելով վիսարկս ան-  
 կիւնը — ես արդէն ծանօթացայ Լօնիայի հետ:

— Ուրեմն ինչ... հարցրեց քոյքս հետաքրքրութեամբ:

— Եւ ոչ մի կարեռը բան... պատասխանեցի ես, առանց նայելու նրա աչքերին:

— Ճիշտ չէ, որ նա այնպէս լաւիկը, գեղեցիկն է...

— Ահ, այդ ինձ համար բոլորովին միենոյն է: Նա ինդրում է քեզ, որ դու գնաս այնահեղ:

— Իսկ դու չես գայ:

— Ոչ:

— Ինչու, — հարցրեց Սօնիան նայելով աչքերիս:

— Հանդիստ թող ինձ... պատասխանեցի ես կոպտութեամբ: Ես չեմ գնայ, որովհետեւ ինձ դուք չեք գալիս...

Իմ ձայնը պէտք է, որ շատ վճռական լինէր, որսկիետեւ քոյքս, առանց որիէ բան հարցնելու, դուքս գնաց: Տեսնելով, որ նա համարեա թէ վաղում է, կանչեցի նրան պատուհանից.

— Սօնիա, ինդրում եմ, նրան ոչինչ մի տակլ... ասա, որ ես..., որ զրուխս քիչ ցաւում է:

— Նու, նու, մի վախենար: Ես քեզ չեմ վասի:

— Ճիշիք, Սօնիա, եթէ գոնէ մի քիչ սիրում ես ինձ:

Հաուկանալի է, որ մենք համբուրւեցինք շատ սրտագին:

Դժւար է այսօր վերանորոգել յիշողութեանս մէջ այն բոլոր զգացմունքները, որոնք տանջում էին ինձ Սօնիայի հեռանալուց յետոյ: Ինչպէս Լօնիան համարձակում էր այդպէս խօսել ինձ հետ... Ճիշտ է, ուսուցիչները, մանաւանդ վերատեսուչը, դէսի ինձ վերաբերում էին ընտաներար, նուրբ—բայց նրանք հասակ առած մարդիկ են: Ընկերներիս մէջ առաջին (այժմ երկրորդ) դասարանում, ես յարգանք էի վայելում: Եւ հենց այստեղ էմ, զիւղում—բարեհանձեցէք լսել, ինչպէս է հետև խօսում հայրս, ինչպէս խոնարհելով բարեկեցին ինձ կալւածական ծառայոցնելով, քանի անգամ զրագիրը ասաց ինձ. «Պարնը, Կաղիմիք, զուցէ դուք կը բարեհանձէք ինձ ժօտական և ծխամորճ ծխելու: Իսկ ես պատասխանեցի. «Ծնորհակալութիւն, պարոն, ես չեմ ուզում վարժուել»: Իսկ նա. «Ինչպէս բախտաւոր էք, պարոն, որ այդպիսի կամք ունէք ինքներդ ձեզ վրայ իշխելու... այդ բանում դուք դաստիարակչունուց էլ յետ չէք մնայ»...

Դէսի աւելի հասակաւորների վերաբերմանը ես նոյնպէս լուրջ էի: Հայր աւագ քահանան ինքը ասաց հօրոս. «Նայիք, պարոն Լեսնինսկի, թէ հասարակ մի տղայից գպրոցը ինչ է պատ-

բաստում, այս կազիան մի տարի առաջ չարաճճիկ և դատարկագլխի մէկն էր, իսկ այսօր նա լուրջ և քաղաքագէտ մարդ է, ինչպէս Մետաերնիխը»:

Այդպիսի կարծիք ունեն իմ մասին մարդիկ... իսկ այստեղ, ինչ որ «այծուկի» մէկը, ոք, նոյնիսկ մի դասարան էլ չի տեսել, համարձակում է ասել ինձ, որ «Քուք, երիտասարդ պարոնիկ, թւում է ինձ, որ ընդունակ էք այդ բանը անելու...» Երիտասարդ պարոնիկ, պարոնիկ... կարծես թէ ինքը մի հասակ առած օրիորդ է: Որովհետև նա ճանաշում է ինչ որ Աղիկի, ուրեմն հպարտութեամբ դլուխը պիտի բարձր պահի: Ո՞վ է Աղիկը. նա վերջացրել է երրորդ դասարանը, իսկ ես մտնում եմ երկրորդը, ՄԵծ տարբերութիւն: Եթէ նա աւանակ լինի, ես կը համնեմ նրան, և նոյնիսկ կանցնեմ էլ: Բացի դրանից, դեռ այդ բաւական չէ, հրամայում էլ է ինձ գնալ և Սօնիային կանչել, կարծես ես ծառայ լինեմ: Տեսնենք, թէ երկրորդ անդամ ես քեզ կը լսեմ: Ազնիւ խօսք եմ տալիս, որ եթէ նա մի անդամ էլ նմանօրինակ բան ասի, այն ժամանակ ուղղակի—կը գնեմ ձեռքերս գրանու և կը պատասխանեմ. «Խնդրեմ ձեզ չափաղանց թոյլ չտաք»: Կամ նոյնիսկ աւելի լաւ. «Յարգել Լոնիտ, ես տեսնում եմ, որ դուք չեք սովորել քաղաքավարութիւնը...» և կամ այսպէս.

«Յարգելի Լոնիտ, եթէ դուք ցանկանում էք, որ ես յարաբերութիւն ունենամ ձեզ հետ...»

Ես զգում էի, որ յարմար պատասխան չէի կարողանում գտնել, իսկ այդ հանդամանքը ինձ աւելի էր զայրացնում: Նոյնիսկ դէմքիս արտայայտութիւնը նկատելի կերպով փոխւել էր, որովհետեւ մեր տնտեսուհին, պառաւ վօյցեխովան\*) երկու անդամ մտաւ սենեակը, կասկածանքով նայելով ինձ վերջապէս ասաց.

— Օ՛հ, տէր Աստւած, ինչու կազիան այսպէս վշտացած է... Արգեօք կազիան մի բան է փշացրել, կամ գուցէ իր պարոն հօր հետ որևէ անախորժ բան է ունեցել...

— Ոչինչ չկայ:

— Ես արդէն տեսնում եմ, որ այդպէս չէ: գու ոչինչ չես թագցնի ինձանից: Եթէ մի վատքան ես արել, գնա շուտով հօրդ մօտ և խոստովանիր նրան:

— Ես ոչինչ չեմ արել: Միայն մի քիչ յունել եմ:

— Այս ըոսէիս ես քեզ մեղք ու հաց կը տամ:

Նա դուրս գնաց, մի ըոսէից յետոյ վերադառն մի մեծ կտոր հաց ձեռքին, որից նոյնիսկ կաթկաթում էր մեղքը:

\*) Ալբերտ կենքոյն Հովհաննելի և առաջ

— Բայց ես չեմ ուտում, հանգիստ թողէք  
ինձ...

— Ինչո՞ւ չպիտի ուտէք: Վերցրն շուտով,  
որովհետեւ մեղրը թափւում է մատերիս վրայ:  
Կուշա կեր, և այն ժամանակ դու աւելի ուրախ  
կը գառնաս: Մարդ միշտ տիսուր է լինում,  
երբ սոված է. բայց երբ նա մի քիչ կշտա-  
նում է, խւզյն ամեն բան նրա դիխում պայ-  
ծառանում է... Նու, վերցրն:

Ես պէտք է վերցնէի, վախենալով, որ նա  
չկաթեցնէ մեղրը մատերիս կամ համազգեստիս  
վրայ: Առանց մտածելու կերայ մեղրահացը և,  
խւկապէս որ, սիրու քիչ աւելի թեթևացաւ: Ես  
մտածեցի, որ մի կերպ կը սարքեմ գործը հօնի-  
այի հետ, և որ ես յաւ կանեմ, եթէ խեղճ Վա-  
լիկին էլ հիւրասիրեմ, որովհետեւ, հաւանական  
է, մեղր նա շատ սակաւ անգամ կերած կը մի-  
նի, և մէկ էլ—մի քիչ ես սիրում էի նրան:

Իմ պահանջի համեմատ, Վօյցեխովան տես-  
նելով, որ այդ գեղը այլպիսի լաւ ազդեցութիւն  
արեց ինձ վրայ, կտրեց ինձ համար հացի աւելի  
մի մեծ կտոր առանց ափսոսալու մեղրը: Զգու-  
շութեամբ վերցրի հետս այդ պաշարը և գուրս  
եկայ տղային փնտրելու:

Նրան գտայ խոհանոցից ոչ հեռու: Նրա հետ  
խօսում էին, ծիծաղելով, երկու կարւածական

ծառայողներ, որոնք անտառից փայտ էին բերել:

— Եթէ մի անգամ էլ մայրդ քեզ ծեծի, —  
ասում էր նրանցից մէկը, — պանդիստութեան  
ճամբան բռնի ու գնա: Ասա, կը գնամս արդեօք...

— Բայց ես չգիտեմ թէ ինչպէս, — պատաս-  
խանեց Վալիկը:

— Դիր կօշիկներդ ձեռնափայտիդ վրայ և  
գնա անտառի յետեզ: Այստեղ աշխարհը շատ  
մեծ է:

— Բայց ես կօշիկներ չունեմ:

— Այն ժամանակ վերցրու միակ ձեռնա-  
փայտդ: Ձեռնափայտով, նոյն խոկ առանց կօշիկի  
դու կը հասնես...

Տեսնելով ինձ տղան փախաւ կատաւկների  
ուղղութեամբ:

— Ի՞նչ էիք ասում նրան, հարցըրի ես կալ-  
ւածական ծառաներին:

— Ոչինչ, մենք ծաղրում էինք նրան, որ  
պէս յիմարի, ինչպէս ընդունւած է:

Զգալով, որ մեղրը արդէն սկսում է կեղ-  
տուել մատերս, ես այլես չուզեցի խօսել նը-  
րանց հետ, այլ գնացի գէպի Վալիկը: Նա կանգ-  
նած էր մի քանի անպէտք խստերի մէջ և  
նայում էր ինձ:

— Վալիկ, կանչեցի ես, — ահա վերցրու  
հաց և մեղր:

Նա չշարժւեց տեղից:

— Նու, եկ... և մի քանի քայլ արեցի:

Տղան սկսեց փախչել:

— Օ՛հ, ինչ յիմարն ես... նու, վերցրու հացը, ես գնում եմ, տես, քեզ համար, ահա, այստեղ...

Եւ զրի հացը քարի վրայ ու հեռացայ:

Բայց հենց որ ես թագնւեցի խոհանոցի անկիւնի յետևը, տղան մօտեցաւ քարին, սկսեց ուշադրութեամբ դիտել հացը և վերջապէս—կերաւ այն, ինչպէս ինձ թւաց, լաւ ախորժակով:

Մի ժամ յետոյ, զնալով ուղղակի դէպի անտառը, ես տեսայ, որ տղան արագութեամբ գալիս է իմ յետեկից, որոշ տարածութեան վրայ: Ես կանգ առայ, նա էլ կանգնեց: Երբ դարձայ դէպի մեր տունը, նա ցատկեց մի կողմ և թագնւեց թփուտի մէջ: Բայց մի ըոպէից յետոյ նա նորից վագում էր իմ յետեկից:

Նոյն օրը ես երկրորդ անգամ նրան հաց ուի: Նա վերցրեց այն իմ ձեռքից, բայց դեռ երկշոտութեամբ, և խոկյն փախաւ: Այնուամենայնիւ այդ ժամանակից սկսած, նա սկսեց գալ իմ յետեկից, բայց միշտ էլ մի փոքր տարածութեան վրայ: Առաւտւանից նա ման էր գալիս մեր պատուհանի շուրջը, ինչպէս մի թռչնակ, որին հատիկներ է շաղ տալիս մի բարեկամա-

կան ձեռք: Երեկոյեան նա նստում էր մեր խոհանոցի մօտ և նայում էր մեր գրանենեակին: Երբ միայն կը ակը հանգչում էր, նա գնում էր քնելու սաւանի վրայ, վասարանի յետելը, ուր ծղրտում էին նրա զիլի վերև ծղրիդները:

## VI.

Լօնիայի հետ ունեցածս հանգիպումից մի երկու օր յետոյ, ակամայից զիջելով Սօնիային, նրա հետ գնացի պարտէզ:

Գիտցիր, — հաւատացնում էր ինձ քոյրս, — որ Լօնիան հետաքրքրում է քեզանով: Շարունակ նա քո մասին է խօսում. նա բարկանում է, որ այն ժամանակ դու չվերադարձար և ամեն անգամ էլ հարցնում է, թէ դու Երբ կը գաս:

Ուրեմն զարմանալի չէ, որ ես զիջեցի, և առաւել, որ իմ մէջ ևս մի բան ձգտում էր դէպի Լօնիան: Ինձ թւում էր, որ միայն այն ժամանակ կը վերջանայ Ցովսէփի մահւան պատճառած կարօտը, երբ սկսեմ զբունել Լօնիայի հետ թևանցուկ, և մի կերպ, լուրջ կերպով վիճաբանեմ նրա հետ: Բայց ինչի մասին, այդ ես մինչեւ այսօր էլ չգիտեմ: Ես միայն զգում էի, որ կամենում եմ խօսել գեղեցիկ, խօսել շատ, և ունենալ միայն, որպէս լող ինձ, Լօնիային:

Ամեն անգամ երբ միտս էր ընկնում մեր երկուսիս զբօսանքների մասին, մի բան կարծես նւագում էր կրծքիս մէջ որպէս տառիղ, պալլզ զում էր մի բան, ինչպէս արևը ցողի կաթիների մէջ. Բայց իրականութիւնը միշտ էլ համապատասխան չէ երազներին: Եւ երբ քրոջն հետ միասին գնալիս ես կրկին պատահեցի Լօնիային, դիմեցի նրան ցանկանալով ոկուլ այն իդեալական զրոյցները:

— Դուք, օրիորդ, հաճոյքով էք ձեներ որ սում:

Այդ իսկ բոպէին աղջիկները բռնեցին իրարձեններից, սկսեցին փափառ, վազել դէպի ծառուղին, ու խելագարի պէս ծիծաղել: Ես յանկարծակի եկայ, պատեցնելով մատերիս մէջ կարթը, որը շինելու ժամանակ քիշ էր մնում մոխրագոյն ձին աքացի տար ինձ, որովհետեւ մի մաղ պոկեցի նրա ոլոչից:

Ես արգէն ուղում էի հեռանալ վիրաւորւած, երբ աղջիկները վերագարձան, իսկ Սօնիան ասաց.

— Լօնիան ինդրում է, որ դուք երկուսդ անւանէք իրար փոխագործաբար ձեր իսկական անուններով:

Ես ուերանս արի, լոեցի այդ դժւար կացութեան պատճառով, նոքա կրկին սկսեցին ծի-

ժաղել և վազեցին ուղիղ դէպի ձեների լճակը:

— Գիտէք արդեօք, երիտասարդ պարոնիկ...— սկսեց Լօնիան, բայց իսկոյն ուղղեց ինքն իրեն:

— Գիտես, Սօնիա, որ մայրիկս վճռականապէս թողլ չի տալիս մեղ լողալ մակոյկով: Ես ասացի, որ եղբայրդ մեղ ման կածի, բայց մայրեկը...

Նա փափաց Լօնիայի տկանջին մի երկարնախաղաստթիւն. բայց ես իսկոյն հասկացայ, թէ ինչ բանի է նա վերաբերում: Հաւանական սահման է, որ գուցէ ես խեղդեմ աղջիկներին, ես, որ այնպէս լու լողորդ եմ և երկրորդ պատարանի աշակերտ...

Ես ամաչեցի: Այդ բանը նկատեց Լօնիան և ասաց յանկարծ:

Բարի եղեք, երիտասարդ պարոնիկ...

Նորից նա ինքն իրեն ուղղեց:

— Խնողիք Սօնիա, եղբարդ, որ նա մեղ համար ջրաշուշաններ պոկի: Նոքա այնպէս զեղեցիկ են, իսկ ես երբէք նրանցից ձեռքին չեմ ունեցել:

Համարձակութիւնս ողնորեց ինձ: Գոնէ այժմ ես ցոյց կը տամ, թէ ինչ կարող եմ անել:

Լճակում շատ շուշաններ կային, բայց ոչ ամոքն սօտող, առ մը քըչ հեռու: Ես մի ձի-

պոտ կարեցի և բարձրացայ օրօրւող մակոյկի  
վրայ:

Շուշանները կարծես թէ առածգական ցո-  
զուններ ունեն: Կպչելով փայտէ ձողին՝ նքա-  
մոտենում էին, բայց կրկին բաց ընկնում ու-  
նեռու լողում: Ես կարեցի աւելի երկար փայտ,  
որը ծայրում մի տեսակ կարթի ձև բան ունէր:  
Այս անգամ ես աւելի լաւ յաջողութիւն ունե-  
ցայ: Ամուր բռնած շուշանը, ահա դէպի ինձ էր  
լողում... բոլորովին մօտիկ... Ես երկարացնում  
եմ ձախ ձեռքս, բայց դեռ չափազանց հեռու է:  
Չոքում եմ մակոյկի ծայրին, կուանում եմ դուրս  
և ծաղիկն արդէն բռնելու վրայ էի, երբ յան-  
կարծ ընկնում եմ ջրի մէջ ամբողջ երկարու-  
թեամբս, փայտը դուրս է սողում ձեռքիցս և  
շուշանը նորից հեռանում է ինձնից:

Օքիորդիկները բղաւում են յանկարծ... Ես  
կանչում եմ ոչինչ չէ պատահել, ոչինչ չէ պա-  
տահել, այստեղ խոր չէ... Գլխաքիցս գուրս եմ  
թափում ջուրը, գնում եմ գլխիս, և մինչեւ ազդր-  
ներս ճակի յատակով ջրի մէջ, մինչեւ ծնկներս  
էլ ցեխի մէջ քայլելով, ես պոկեցի մի շուշան,  
յետոյ երկրորդը, երրորդը չորրորդը...

— Կազիա, ի սէր Սատծոյ, վերադարձիր...  
կանչում է լալով քոյրս:  
Իսկ ես նրանց չեմ լսում: Ես պոկում եմ

մինպերարդ, վեցերորդ, մինչեւ տասներորդ շու-  
շանը և յետոյ էլ տերենները:

Պուրս եկայ թակից թրջւած, ոտերից մին-  
չեւ գլուխս և ազտուտած ցեխով մինչեւ ծնկներիս  
վերել և թեքիս վրայ: Ափի մօտ Լօնիան չէ  
ուզում ընդունել ծաղիկները, իսկ նրանց եր-  
կուսի յետուր թագնուում է, վախից գեղնած—  
Վալիկը:

Ես տեսնում եմ, որ Լօնիան նոյնպէս աշ-  
քերում արցունքներ ունի, բայց յանկարծ նա  
սկսում է ծիծաղել.

— Նայիր, Սօնիա, ինչի է նա նմանում...

— Աստւած իմ, ինչ պիտի ասէ հայրիկը...  
կանչում է Սօնիան: Կազիա ջան, գոնէ երեսդ  
լա, որովհետեւ գու բոլորովին ցեխուտած ես:

Սկամայից ես բռնում եմ քիթս ցեխուտած  
ձեռքովս: Լօնիան ծիծաղից նոյն իսկ նստում է  
խոտերի վրայ: Սօնիան նոյնպէս ծիծաղում է աշ-  
քերը սրբելով: Նոյն իսկ Վալիկը բռնում է բե-  
րանը և կենդանու նման ձայներ արձակում:

Այժմ են միայն Վալիկին նկատում աղջ-  
կերքը:

— Այս ինչ է, — հարցում է Սօնիան, — Որտե-  
ղից լոյս ընկաւ նա այստեղ:

— Նա այստեղ եկաւ եղքօրդ հետ միա-

սին,— պատասխանեց. Լօնիան:— Ես տեսայ նրան,  
ինչպէս նա անցնում էր թփերի արանքով:

— Աստւած իմ, ինչպիսի զլխողկ ունի...  
Նա քեզնից ինչ է ուզում, Կազիա...— հարցնում  
է քոյրս:

— Նա ինձ հետեւում է արդէն մի քանի  
օրից ի վեր:

— Ահա թէ ինչ, ուրեմն Կազիան նրա հետ  
էր խաղում, երբ նա խուսափում էր մեզնից...—  
ասաց ծաղրանքով Լօնիան:— Նայիր, Սօնիա, ին-  
չի նման են նրանք երկուուն էլ,— մէկը բոլորո-  
վին թրջւած է իսկ միւսը՝ անլւայ... Օ՛հ, ես  
ծիծաղելուց կը պայթեմ...

Եյս համեմատութիւնը Վալիկի հետ ինձ  
բոլորովին դուք չեկաւ:

— Նու, Կազիա ջան, լւացւիր և իսկոյն գնա  
տուն հագուստներդ փոխելու, իսկ մենք առ  
այժմ կը գնանք զրուցարանը, — ասաց Սօնիան  
բարձրացնելով Լօնիային, որը շափազանց ուրա-  
խութիւնից քիչ էր մնում ջղերի կծկում ստա-  
նար:

Նոքա հեռացան: Մնացինք ես, Վալիկը և  
խոտերի վրայ շուշանի փունջը, որը ոչ ոք չը-  
քառացրեց: — Այսահսի վարձատրութիւն ու-  
րեմն իմ զոհաբերութեան համար, — մտածեցի ես  
զառնութեասը, պատրի մըսնոյն Շանանան բեր-

նիս մէջ ցեխի մի կտոր: Ես վերցըի գիւարկս:  
Սոսկալի է. Բնչ է դառել նա... Նա նմանում  
էր ցնցոտիի, իսկ ծածկոցի մի կողմը բոլորո-  
վին պոկ էր եկեր. Համազգեստիցս, Ժիկեալցս և  
շավկիցս ջուրը հոսում էր հեղեղի նման: Կո-  
շիկներս այսպէս լեցւել էր ջրով, որ նոյն իսկ  
շարժեւելիս չփչփոցի ձայն էր գալին:

Ես այսպէս եմ զգում, կարծես մարմնիս  
վրայի քաթանը մահուցի է փոխւել, մահուցը  
կաշի, իսկ կաշին էլ՝ փայտի: Իսկ այստեղ,  
զրուցարանի ուղղութեամբ, լսում եմ տակաւին  
Լօնիայի ծիծաղը, որը պատմում է ինձ հետ  
պատահած արկածը դաստիարակչուհուն:

Մի րոպէից յետոյ նոքա անշուշտ կը գան  
այստեղ: Սկսում եմ լւացւել. բայց, գեռ չը-  
վերջացրած այդ գործողութիւնը, ես փախչում  
եմ, որովհետեւ նրանք արդէն գալիս են... Արդէն  
ծառուղիում ես տեսնում եմ նրանց հագուստ-  
ները և լսում եմ զաստիարակչուհու ծաղրը: Նո-  
քա կտրեցին դէպի տուն տանող իմ ճանապար-  
հը, այդ պատճառով ես փոխում եմ ճանապարհ  
դէպի ցանկապատի կողմը:

— Ո՞րտեղ է նա, — հարցնում է ճոճողալով  
զաստիարակչուեին:

— Ահա այստեղ, այստեղ... նրանք երկուուն  
չեւ մահչում են, — պատասխանում է Լօնիան:

Ոյժմ եմ միայն ես նկատում, որ Վալիկը քայլ առ քայլ վազում է իմ յետելից: Հասնում եմ ցանկապատին, նա նոյնպէս: Մազլցում եմ փայտի ձողի վրայ, նա ևս Եւ երբ երկուսով, երեսները իրար դարձրած, նստած ենք ցանկապատի վրայ, ինչպէս ձիու վրայ, փոքրիկ ծառերի խմբի մէջ երեսում են Լօնիան, Սօնիան և գատահարակչունին:

— Ա՞հ, ահա կրկին այս բարեկամը, — բղաւում է Լօնիան ծիծաղելով:

Ես ցանկապատից ցատկում եմ ներքն և վազում եմ դաշտով ուղիղ գէպի մեր գրասենեակը. իսկ Վալիկը միշտ էլ ընկերակցում է ինձ: Ըստ երեսյթին, այս փախչորսը նրան գւարճացնում է, որովհետեւ նա բանում է բերանը և կենդանու նման ձայներ է հանում, որը դոհունակութեան նշան է նրա կողմից:

Ես կանգ տուայ, — բարկութիւնից կատաղած:

— Սիրելիս, ինչ ես ուզում ինձնից... ինչու ես անդադար ինձ հետեւում, — ասացի ես տղային:

Վալիկը շւարեց:

— Հեռացիր ինձնից, հեռացիր... — ասացի ես սեղմելով բոռնցքներս: — Դու ինձ ամաչեցրիր, բոլորը ծիծաղում են վրաս... Եթէ մի ան-

գամ էլ ճանապարհս կտրես, ես քեզ կը ծեծեմ...

Այս ասելով ես հեռացայ, իսկ տղան մնաց: Երբ մի քանի տասնեակ քայլ հեռացայ, դարձնելով գլուխո՛ տեսայ նրան նոյն տեղում: Նա նայում էր ինձ և բարձր հեկեկում:

Վաղեցի մեր խոհանոցը կատարեալ վամպիրի նման, որտեղով որ քայլում էի, այստեղ մնում էր ջրի մի շերտ: Ինձ տեսնելով վախեցած հաւերը կչկչալով և տարածելով թերը, նետւեցին գէպի պատուհանները, ծառայող աղջըկերը սկսեցին ծիծաղել, իսկ Վալիկան ձեռքերը իրար զարնեց:

— «Բանն մարմացաւ...\*)» ինչ է պատահել քեզ... բացականչեց պառաւը:

— Միթէ չէք տեսնում... ընկել եմ ձիների լճակը, ահա բոլորը... բարի եղէք, Վօյցեխովա, տալու ինձ քաթանէ հագուստ, կօշիկներ, շապիկ... միայն շուտով:

— Իմ տիբութեան մշտական պատճառը միշտ էլ այս կազիան պէտք է լինի, — բացականչեց Վօյցեխովան: Բաճկոնակի կոճակները երեկ դեռ կարած չեն... կատարինէ, գտիր շուտով կօշիկներ:

Նա սկսում է համազգեստիս կոճակները

\*) Աւետարանից մի կտր, որը գործ է ածուսմ լեներէն մեծ զարմանը և շարում արտայատելու համար:

արձակել և հանել մի ուրիշ աղջկայ օգնութեամբ: Այդ նրանց յաջողւեց, բայց կօշիկներս հանելը աւելի դժւար էր, նրանք նոյնիսկ չէին շարժում: Վերջապէս նրանք օգնութեան կանչեցին ձիապանին: Ես ստիպւած էի պառկել փայտէ մահճակալի վրայ: Վօյցեխովան երկու աղախինների հետ բռնել էին թեերիցս, իսկ ձիապանը քաշում էր կօշիկներս: Ես մտածում էի, որ նա ուսս պիտի դուրս գցի: Բայց մի կէս ժամից յետոյ, ես տիկնիկի նման մաքրւած, շրեերս փոխած անրւում էի: Եկաւ Սօնիան և իմ քա:

Հետո կուն ները կարեց, Վօյցեխովան թրջւած հագուստն որիցս մզեց ջուրը, տարաւ մանսարդը (առաստաղի տակի սենեակը), և խոստացաւ դէպքի մասին կատարեալ լութիւն պահպանել:

Այնուամենայնիւ հայրս, վերադառնալով տռն, տեղեկացաւ բոլորի մասին: Նա ծաղրանքով նայեց ինձ, օրօրեց գլուխը և ասաց.

— Օհ, զու աւանակ, աւանակ... Ուրեմն զնա Լօնիայի մօտ, որ նա քեզ համար նոր անդրավարդիկ առնէ:

Շուտով երեաց պարոն օղեգործը: Սա ևս լաւ դիտեց ինձ, ծիծաղեց, բայց յետոյ լսեցի, ինչպէս նա տառմ էր հօրո իր առանձնասենեակուց:

— Կայտառ երեխայ է, աղջկերանց յետեւից մինչև կրտկն էլ կը գնայ... Ճիշտ մեզ նըման, երբ մենք երկտասարդ էինք, պարոն էեւնիսկի:

Ես հասկացայ, որ կալւածում ապրող բոլոր մարդիկ գիտէին իմ դէպի Լօնիան ունեցած սիրալիութեան մասին, և ես ամաչում էի:

Երեկոյեան դէմին եկաւ մեր կալւածատիրուհին, Լօնիան և դաստիարակչուհին, և իւրաքանչիւրը նրանցից, այ ձեզ հրաշք, իրենց շրջագեստի վրայ... մի-մի ջրաշուշան ունէին: Ես ուզում էի թագնւել գետնի տակ, վախչել, բայց կանչեցին ինձ, և ես կանգնեցի դէմ առ դէմ նրանց առաջ:

Ես նկատեցի, որ դաստիարակչուհին շատ բարեացակամ կերպով է նայում վրաս: Իսկ կոմսուհին փաղաքշանքով շոյեց կարմիր դէմքս և մի քանի կանֆետներ տւեց ինձ:

— Տղաս, ասաց նա, շատ գեղեցիկ է, որ զու այդչափ քաղաքավարի ես, բայց ես քեզ խնդրում եմ, օրիորդներին երբէք մակոյկով մանշածես, լմէ...

Ես համբուրեցի նրա ձեռքը ինչ որ բան շալով:

— Բայց ինքդ էլ մի լողայ: Խոստանմաւմ ես ինձ:

— ԶԵմ լողայ:

Յետոյ նա դարձաւ դէպի դաստիարակչուհին և նրա հետ, Փրանսերէն լեզով, ինչ որ բան խօսեց: Մի քանի անգամ ես լսեցի կը կընւող «hero» բառը: Տարաբախտաբար այդ բառը լսեց նաև հայրս և ասաց.

— Օ՛, դուք իրաւացի էք, տիկին կոմսուհի: Հերօդ, իսկական Հերօդ...

Կանայք ժպտացին, իսկ նրանց հեռանալուց յետոյ Սօնիան աշխատում էր բացատրել հօրս որ «hero» զբումէ «heros», և Փրանսերէն նըշանակում է ոչ թէ հերօդ, այլ «հերոս»:

— Հերմս, — կրկնեց հայրս: Նա այնողիսի հերոս է, որ թը ջեց իր համազգեստը և պատռաւեց անդրավարդիկը, և ես ստիպւած եմ Շուլմին վճարել մօտ քսան լեհական ֆլորէն: Գրողը տանէ այն հերոսութիւնը, որի համար ուրիշները պիտի վճարեն:

Հօրս այդ պրոզայիկ կարծիքները ինձ շատ վշտացրին: Այսուամենայնիւ ես շնորհակալ եղայ Աստծուց, որ նոքա հետևանք չունեցան:

Այդ ժամանակից սկսած ես աեմնում էի Լօնիային ոչ միայն պարտիզում, այլ նաև պալատում: Մի քանի անգամ այնտեղ ես ճաշեցի, մի բան, որ ինձ շատ դժւար կացութեան մէջ էր ձգում, և գրեթէ ամեն օր նախընթրիք էի

անում. այդ ժամանակ մեզ տալիս էին սուրճ կամ եղագ, և կամ մոռ՝ շաքարով և թարմ կրեմով:

Ես յաճախ խօսակցում էի աւելի հասակաւոր տիկինների հետ: Կոմսուհին հիանում էր իմ շատ կարդացած լինելու վրայ, որի համար ես պարտական եմ կուզիկի գրքերին. իսկ դաստիարակչուհին, օրիորդ կլեմենտինան, բոլորովին սքանչացած էր ինձնով. ինչ վերաբերում է վերջնիս համակրանքին, ես պարտական էի ոչ այնչափ իմ պարտաստականութեան, որչափ կալւածական գրագրի մասին ունեցած մեր զրոյցներին, որի մասին ես գիտեի, թէ որտեղ է նա հսկում գործերի վրայ և թէ նա ինչ է ասում օրիորդ կլեմենտինայի մասին: Վերջապէս այս կը թւած անձնաւորութիւնը վստահանում էր ինձ ասելու, որ ինքը բոլորովին մտազրութիւն չունի ամուսնանալու կալւածական գրագրի հետ, բայց որ ինքը միայն կը ցանկանար բարձրացնել նրան բարոյապէս: Նա յայտարարեց ինձ, որ իր կարծիքով, կանանց գերը մեր կեանքում տղամարդկանց բարյապէս բարձրացնելու մէջն է կայտնում, և որ ես ևս, երբ աւելի կը հասունանամ, պէտք է իմ կեանքում պատահեմ այնպիսի մի կնոջ, որը ինձ կը բարձրացնի:

Այս դասերը շատ էին ինձ դուք դալիս:

Միշտ էլ մեծ եռանդով էի տեղեկութիւններ հասցնում օրիորդ Կլեմենտինային գրագի մասին, իսկ նրան էլ՝ օրիորդ Կլեմենտինայի մասին, որի համար ես երկուսի էլ բարեացակամութիւնը ձեռք բերի:

Որչափ ես այսօր յիշում եմ, պալատում մի առանձին տեսակի կեանք կար: Կոմունումոտ, իւրաքանչիւր երեք կամ չորս օրը մեկ, գալիս էր իր նշանածը, իսկ օրիորդ Կլեմենտինան ամեն օր մի քանի անգամ այցելում էր պարտիզի այն մասերը, որտեղից նա կարող էր տեսնել գրագրին, և կամ գոնէ, ինչպէս ինքն էր ասում, լսել նրա ձայնի հոչշնները, հաւանականաբար այն ժամանակ, երբ նա հայնոյում էր կալւածական ծառաներին: Սպասուհին էր, իր կողմից, արտասում էր նստած կամ այս, կամ այն պատուհանի առջև միենոյն գրագրի պատճառով, իսկ մացած ծառայող օրիորդները նմանելով իրենց տէրերին, բաժանում էին ի՞րենց զգացմունքները լակէի, բուֆետում ծառայող երիտասարդի, խոհարարի օգնականի և կառապանի հետ: Նոյն իսկ պառաւ Սալօմէայի սիրտն էլ ազատ չէր: Նրա մէջ իշխում էին հնդկահաւերը, սագերը, բագերը, աքլորներն ու որձատները, ինչպէս նաև նրանց զանազանափետուր և տարբեր ձեի ընկերուհի-

ները, որոնց ընկերութեան մէջ էր անցկացնում տնտեսուհին իր ամբողջ օրը:

Հասկանալի է, որ այսպիսի մի զբաղւած հասարակութեան մէջ ժամանակը մեզ՝ երեխաներիս համար անցնում էր շատ ազատ: Մենք խաղում էինք առաւտոից մինչեւ երեկոյ, և միայն այն ժամանակ էինք տեսնում աւելի հասակաւոր մարդկանց, երբ կանչում էին մեզ ճաշշելու, նախընթրելու և կամ գիշերային հանդիսար վայելելու:

Ծնորհիւ այս տրամադրութեան՝ իմ յարաբերութիւնները Լօնիայի հետ տեղի էին ունենում բաւական արտասովոր կերպով: Նա ինձ մի քանի օրւայ ընթացքում «Կազիա» էր անշանում, յետոյ՝ «գուռ»—ընդունում էր իմ ծառայութիւնները, նոյնիսկ հայնոյում էր ինձ, իսկ ես—միշտ անւանում էի «տիկին»\*) կամ օրիորդ Սօֆիա, աւելի սակաւ էի խօսում, բայց աւելի յաճախ լսում: Երբեմնակի արթնանում էր իմ մէջ մարդ արարածի հպարտութիւնը, այն մարդու, որը մի տարուց յետոյ կարող է մանել երրորդ դասարան: Այն ժամանակ ես անիծում էի այն բոպէն, երբ առաջին անգամ հնագանդւեցի Լօնիային, երբ նրա հրամանով գնացի քրոջականչելու: Իսքս ինձ ասում էի.

\*) Լեհացէց օրիորդներին էլ երբ նրա անունը չեն տալիս, ամկին անունով են դիմում:

— Ի՞նչ է նա մտածում. գուցէ այն, որ ևս  
նրա մօտ ծառայութեան մէջ եմ, ինչպէս հայրս  
նրա մօք մօտ...

Այս եղանակով ես ինքս ինձ ըմբոստացնում  
էի և վճռում, որ այս այսպէս չպիտի մնայ և  
պիտի փոխւի: Բայց հենց որ տեսնում էի Հօ-  
նիային, կորցնում էի իմ ամբողջ համարձա-  
կութիւնը, և եթէ նոյն իսկ ինձ յաջողւում էր  
այդ համարձակութիւնից մի մասնիկ պահել իմ  
մէջ, այն ժամանակ Լօնիան իր հրամանները  
տալիս էր այնպիսի մի անհամբեր ինդրի ձեռվ,  
այնպէս էր նա խփում զետնին իր փոքրիկ ո-  
տով, որ ես ստիպւած էի անել ամեն ինչ: Եւ  
երբ մի անգամ բանելով մի ճնճղուկ ես չուի  
այն նրան, իսկոյն, նա բացականչեց.

— Եթէ դու չես ուզում ինձ տալ ճնճղու-  
կը, լաւ... ես կարիք չունիմ նրան...

Նա այնպէս վիրաւորւած և այնպէս բար-  
կացած էր, որ ես սկսեցի երգւել ու խնդրել  
նրան, որ վերցնի ճնճղուկը: Բայց նա յամա-  
ռութեամբ մերժում էր՝ ոչ, ոչ... Հազիւ ինձ  
յաջողւեց նրա ներողամտութիւնը հայցեր, ի  
հարկէ քրոջս օգնութեամբ. չնայելով այդ բա-  
նին, մի քանի օր շարունակ ես ստիպւած էի  
տրտունջներ լսել.

— Երբէք կեանքիս մէջ ես ընդունակ չեմ

լինի քեզ՝ նմանօրինակ մի անախորժութիւն  
պատճառել: Այժմ ես զիտեմ, թէ դու ինչպէս  
յաժանն ես: Առաջին օրը դու ջուրը ցաւկեցիր ինձ  
համար շուշաններ պոկելու, իսկ արդէն երեկ-  
ու նոյնիսկ թոյլ չէիր տալիս մի քիչ խաղալու  
թոշնակի հետ: Ես արդէն զիտեմ բոլորը: Օհ,  
ոչ մի տղայ իմ վերաբերմամբ այդպիսի բան  
չէր անի...

Եւ երբ, բոլոր ննարաւոր բացատրութիւն-  
ներից յետոյ ես խնդրեցի նրան վերջապէս, որ  
գոնէ չբարկանայ, նա պատասխանեց.

— Միթէ ես բարկանում եմ... Դու շատ  
լաւ զիտես, որ ես քեզ վրայ չեմ բարկանում:  
Միայն ինձ համար անախորժ է այդ: Բայց թէ  
ինչպէս ինձ համար անախորժ էր, այդ ոչ ոչ  
չէ կարող երեւակայել... Թող ինքը Սօնիան ասէ  
քեզ, թէ ինչպէս անախորժ էր ինձ համար:

Այն ժամանակ Սօնիան, հանգիստոր գէմ-  
քով, բացատրում էր ինձ, որ Լօնիայի համար  
շատ, շատ անախորժ էր:

— Աւելի լաւ է թող Լօնիան ինքը ասէ  
քեզ, ինչպէս անախորժ էր նրա համար,—վեր-  
ջացրեց իմ սիրելի ըոյըբիկը:

Եւ այսպէս ուղարկւելով մէկից դէպի միւ-  
սը՝ աւելի ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու  
համար այդ անախորժութեան աստիճանի մասին,

ես բոլորովին կորցրի իմ մտածելու ընդունակութիւնս:

Ես դարձել էի մի մեքենայ, որի հետ օբեռդիները անում էին այն ամենը, ինչ իրենց էր դուր գալիս, որովհետեւ ինքնուրոյնութեան ամենափոքրիկ նշանն անդամ իմ կողմից կամ Լօնիային և կամ Սօնիային պատճառում էր անախորժութիւն, որը միշտ այն երկու օրիորդները միասին էին զգում:

Եթէ ինեղ Յովսէփը ելնէր գերեզմանից, չէր ճանաչի ինձ այն հեզ, հնազանդ և երկշուռ երիտասարդի դրութեան մէջ, որը միշտ էլ մի բան բերում, մի բան փնտրում, մի բան չէր հասկանում և ամեն բուդէ էլ յանդիմանութիւններ էր լուսւմ: Ախ, եթէ այս տեսնէին իմ ընկերները...

## VII

Մի օր օրիորդ Կեմենտինան սովորականից աւելի զբագւած էր. որովհետեւ կալւածական զբագիրը ինչ որ հակողութիւն ունէր գոմում, մի քանի տամնեակ քայլ հեռու նրա սիրելի զրուցարանից, օգտագործելով այդ, մենք երեքով դուրս պրծանք և գնացինք պարտիզի յետեր գէպի այն թփերը, որոնց վրայ ահազին քանակութեամբ մոշի հատիկներ կային:

Անշափ շաօ մոշ կար: Ամեն մի քայլափոխում պատահում էին մոշի թփեր, իսկ նրանցից իւրաքանչիւրի վրայ սեխն էին տալիս սալորի պէս խոշոր հատիկները: Սկզբում մենք հաւաքում էինք բոլորս միասին, փոխանակելով իրար մէջ զարծանքի և գոհունակութեան բացականչութիւններ: Շուտով սակայն մենք լոեցինք և ցըրւեցինք, իւրաքանչիւրս զանազան կողմեր: Ես չգիտեմ, թէ ինչ էին անում աղջիկները, բայց մտնելով ամենախիտ թփերի խորքերը, բոլորովին մոռացել էի դրսի աշխարհի մասին: Ինչպիսի մոշեր էին... Այսօր այդպիսի արքայախնձորներ նոյնիսկ գոյութիւն չունին:

Երկար կանգնած մնալուց յօդնած, ես նրատեցի. նստելուց էլ յօգնելով, ես պառկեցի թըփերի վրայ, ինչպէս զսպանակաւոր բազկաթոռի վրայ: Այստեղ այնպէս տաք, այնպէս փափուկ ու ամեն բան այնպէս աղատ էր, որ ես ակամայից նկացի մտածել, որ ճիշտ այսպէս պիտի լինէր Աղամի դրախտում: Աստած իմ, Աստած իմ, ինչու ես Աղամը չէի: Մինչի այսօր այն անքծեալ ծառի վրայ խնձորներ կը բնէին, որով հետև նրանց պոկելու համար, ես մինչեւ անհամ չէի ցանկանոյ ձեռքս զլիսից էլ վերև բարձրացնել...

Ինչպէս օձը շերմ արեի տակ, տարածւե-

լով ճկուն թփերի վրայ՝ զգում էի աննկարագրեցի երջանկութիւն, մանաւանդ այն պատճառով, որ ես կարող էի չմտածել բոլորովին։ Երբեմն շուռ էի գալիս մէջքիս վրայ պահերով գլուխս աւելի ցած, քան ամբողջ մարմինս։

Քամուց շարժուղ տերեները շոյում էին իմ երեսը. ես նայում էի վերի, հսկայական երկընքին, և մի անշափ բաւականութեամբ պատկերացնում էի ինձ, որ ես – բոլորովին գոյութիւն չունիմ։ Լօնիան, Սօնիան, պարտէզը, ճաշը, վերջապէս դպրոցը և պարոն աեսուշը, բաղրը, բոլորը ինձ երազ էին թւում, որոնք մի ժամանակ եղել են, բայց արդէն անցել են հարիւր տարի, գուցէ և հազար տարի սրանից տուածեղած Յովուեփը հոււանական է երկնքում միշտ էլ այսպիսի մոմենտներ է ապլում։ Ինչպէս նա բախտաւոր է…

Վերջում ես նոյնիսկ կորցրի մոշ ուտելու ցանկութիւնս։ Ես զգում էի, ինչպէս թփերը անուշ բարձրացնում էին ինձ։ Տեսնում էի երկնային կուպոյտի վրայ դամսպազօրէն սահող ամեն մի ամպիկ, լսում էի ամենափոքրիկ աերեիկի սլսոցն անգամ, բայց ինքս ոչինչ չէի մտածում։

Ցանկարծ մի բան ինձ ցնցեց։ Ես վեր ցատկեցի, չհոսկանալով, թէ ինչ է պատահեր։

Մի գայրկեան լուսթիւն տիրեց, ինչպէս

առաջ, բայց նոյն ըոսէին ես լսեցի Լօնիայի աղաղակի ձայնը։

— Աօնիա… Օրինրդ Կլեմենտինա, օդնութիւն…

Լօնիայի «օդնութիւն» բղաւոցի մէջ, ինչ որ սարսափելի բան կար։

Մտքովս անցաւ, որ կարող է իժ-օձ լինել։ Վայրի սալորենու թուփը բռնել էր հագուստիցս, վաթաթւել էր ոտներիս, կմմթում, հրում էր ինձ. ոչ… Նա կուում, պայքարում էր ինձ հետ, ինչպէս մի կենդանի հրեշ, իսկ Լօնիան բղաւում էր «օդնութիւն»… Ասուած, Ասուած իմ… Ես հասկանում էի միայն մի բան, պարզ, ինչպէս արել, որ պէտք է օդնութեան համեմ, կամ ինքս կորչեմ։

Ցոգնած, ճանկուած, և ամենից շատ – սարսափահար եղած, ես ինձ մի կերպ ձգեցի այն սեղը, որտեղից լսում էի Լօնիայի լացի ձայնը։

— Լօնիա… ինչ է պատահել քեզ, – կանչեցի ես նրան, առաջին անգամ իր անունով։

— Պիծակ… պիծակ…

— Պիծակ… կը կնեցի ես ցատկելով գէպի նա, – նա կծեց քեզ…

— Դեռ ոչ, բայց…

— Բայց ի՞նչ…

— Նա սողում է իմ վրայով…

— Ո՞րտեղ է...

Նրա աչքերից հոսում էին արցունքները: Նա  
շատ էր ամաչում, բայց սարսափը գերակռում էր:

— Նա մտաւ գուլպայիս մէջ... Օ՛, Աստ-  
ւած իմ... Աստւած իմ... Սօնիա...

Ես չոքեցի նրա կողքին, բայց դեռ չէի հա-  
մարձակում որոնել պիծակը:

— Ուրեմն վերցրու և շպրտիր նրան, —ա-  
սացի ես:

— Բայց ես վախենում եմ: Օ՛հ, Աստւած իմ...

Նա զողում էր ինչպէս տեսդի մէջ: Ես հա-  
սայ համարձակութեանս գագաթնակէտին:

— Ո՞րտեղ է նա:

— Այժմ նա սողում է ծնկներիս վրայ:

— Նա ոչ այստեղ է և ոչ այնտեղ:

— Այժմ նա աւելի բարձր է: Ա՛հ, Սօնիա...

Սօնիա...

— Բայց նա այստեղ էլ չկայ...

Լօնիան ծածկեց աչքերը ձեռներով:

— Նա երկի թագնւել է շրջազգեստիս  
մէջ... — ասաց նա աւելի սրտամորմոք լացով:

— Ահա նա... բացականչեցի ես: — Սա  
ճանձ է...

— Ուր է... ճանձ է... հարցրեց Լօնիան:  
Իսկապէս, ճանձ է: Օ՛հ, ինչպէս նա մեծ է...  
իսկ ես համոզւած էի, որ նա, պիծակ է: Մտա-

ծում էի, որ ես պիտի մեռնեմ... Աստւած իմ,  
ինչ յիմարն եմ ես:

Նա որբեց աչքերը և անմիջապէս սկսեց  
ծիծաղել:

— Սպանել նրան, թէ ազատութիւն տալ, —  
հարցրի ես Լօնիային, ցոյց տալով նրան դժբախտ  
միջատին:

— Ինչպէս կուզես, — պատասխանեց նա ար-  
գէն: բոլորովին հանգիստ:

Ես ուզում էի սպանել ճանձին, բայց ափ-  
սոսացի նրան: Եւ, որովհետեւ նրա թեփկները,  
ինչպէս և հենց ինը, ճամլել էին բաւականին,  
այդ պատճառով զգուշութեամբ դրի նրան տերեկ  
վրայ:

Լօնիան նայում էր ինձ մի առանձին ուշա-  
գրութեամբ:

— Թեզ հետ այդ ինչ է պատահում... յան-  
կարծ հարցը եց նու:

— Ոչինչ, — պատասխանեցի ես աշխատելով  
ծիծաղել:

Ես զգացի, որ յանկարծ ուժերս թողնում  
են ինձ: Սիրտս բարախում էր, ինչպէս զան-  
գակ, աչքերս մթնեցին, ցուրտ քրտինքը պա-  
տեց ամբողջ մարմինս, և ընկներիս  
վրայ՝ օրորւում էի:

— Ի՞նչ պատահեց քեզ, Կաղիա...

— Ոչինչ... միայն ես մտածում էի, որ մի դժբախտութիւն պատահեց քեզ...

Եթէ Լօնիան ինձ չըռնէր և ու չյենէր գլուխըս իր ծնկներին, ես քիթս պիտի ջարդէի գետնի վրայ:

Մի տաք ալիք հարւածեց իմ գլուխս, ականջներիս մէջ ինչ որ խշխշոց լսեցի: Դարձեալ Լօնիայի ձայնը.

— Կաղիա... սիրելի՝ Կաղիա... Ի՞նչ պատահեց քեզ... Սօնիա... Օ՛հ, Աստւած իմ, նա ուշաթափւեց: Ես ինչ պիտի անեմ այստեղ, ես դժբախտս...

Նա գըկեց գլուխս երկու ձեռներով և սկսեց համբուրել: Ամբողջ դէմքիս վրայ զգում էի նրա արցունքները: Ես այնքան կարեկցեցի նրան, որ հաւաքելով մնացած ուժերս—մեծ դժւարութեամբ վեր կացայ:

— Ոչինչ չկայ... մի վախենար,—կանչեցի ես կրծքիս խորքից:

Եւ իսկապէս, բռպէական թուլութիւնը անցաւ այնպիսի արագութեամբ, ինչպէս նա եկել էր: Ականջներիս խշխշոցը դադարեց, տեսողութիւնս պարզեց, բարձրացրի գլուխս Լօնիայի ծնկներից վեր, և նայելով նրա աչքերին՝ ծիծաղեցի:

Նա էլ սկսեց ծիծաղել:

— Ա՛հ, դու ինչ անսիրտ և վատն ես,— սկսեց նա, — որ ինձ այսպէս վախեցրիր: Ի՞նչպէս գու կարողացար ուշաթափւել, այդպիսի մի չընշին բանի համար... Եթէ նա նոյնիսկ պիծակ լինէր, ինձ չպիտի ուտեմք խօմ... Եւ ինչ կարող էի անել այստեղ, քեզ օգնելու համար... ոչ ջուր կայ, ոչ մարդ կայ. Սօնիան էլ հնոացել է ինչ որ տեղ. միայն ես պիտի վրկէի այդպիսի մի մեծ տղայի: Ամօթ քեզ:

Յիբաւի, ես ամաչում էի: Միթէ նրան վախեցնելու այնպիսի մի պատճառ կար:

— Նու, այժմ ինչպէս ես զգում քեզ,— հարցը կանչիան: Է՛հ, անպայման լաւ, որովհետեւ էլ այնպէս գունադ չես: Առաջ գունադ էիր, ինչպէս քաթանը:

— Նու,—ասաց նա մի ըռպէից յետոյ, — ինչ կը լինի իմ դըռութիւնը, եթէ մայրս այդ մասին իմանայ... ահ, Աստւած իմ. Ես նոյն իսկ վախենում եմ տուն վերադառնալ...

— Ի՞նչ բանի մասին կիմանայ մայր,  
հարցը ի ես.

— Ամեն բանի, ամենավատը, այս պիծակի  
մասին...

— Ուրեմն ոչ ոքի մի ասա:

— Ոչինչ չի օգնի, եթէ ես չասեմ... խօսեց նա շուրջ տալով դուռիւ:

— Գուցէ դու կարծում ես, որ Ես կասեմ,  
պատասխանեցի: Հայրիկիս արել, ես ոչ ոքի մի  
բան անգամ չեմ ասի:

— Եւ ոչ էլ Սօնիային... Նա շատ լաւիկն  
է զաղանիքների համար:

— Եւ ոչ էլ Սօնիային: Ոչ ոքի:

— Չնայելով նոյնիսկ այդ բանին, բոլորն  
էլ կիմանան: Դու այդպէս ճանկուուած, գըղգըգ-  
ւած ես... Բայց, սպասիր,—աւելացրեց նա մի  
բովէից յետոյ և սըրեց երեսս թաշկինակով:  
Ասուած իմ, դու գիտես, որ ես սարսափից  
նոյն իսկ համբուրում էի քեզ, որովհետև չգիտէի,  
թէ ինչ անեմ: Եթէ մէկը այդ բանը իմանայ,  
ես ամօթից կայրենմ, չնայելով, ճիշտ է պիծակն  
Էլ ահծ վիշտ պատճառեց ինձ: Ահ, ինչքան ես  
վշտեր ունեմ քո պատճառով...

— Բայց դու պատճառ չունես մի բանից  
վախենալու,—մտիթարում էի ես նրան:

— Այս, չունիմ: Ամեն բան կը բացւի,  
որովհետև նայիր, որքան տերե կայ մազերեղ  
մէջ: Բայց սպասիր քեզ սանրեմ: Ես միայն  
վախենում եմ, որ որևէ թփի յետից չըրտեսի  
մեզ Սօնիան: Նա շատ լաւիկն է զաղանիքների  
համար, բայց յամենայն դէպս...

Լօնիան վերցրեց իր մազերից կիսաշրջանա-  
ձև սանրը և սկսեց մազերս սանրել:

— Դու միշտ զզզուած ես,—ասաց նա:  
Դու պէտք է սանրւես այնպէս, ինչպէս բոլոր  
պարոնները: Ահա, այսպէս, մազերը պէտք է  
ըաժանել աջ կողմում, և ոչ ձախ: Եթէ դու մե  
մազեր ունենայիր, այնպէս գեղեցիկ կը լինէիր,  
ինչպէս մայրիկիս նշանածը: Բայց որովհեան  
շիկահեր ես, քեզ կը սանրեմ այլ կերպ: Այժմ  
դու կը նմանես այն հրեշտակին, որը նկարւած է  
Մադոննայի տակը: Արդեօք գիտե՞ս որ հրեշտա-  
կին, ամսոս, որ հայելի չունիմ:

— Կապիա, Լօնիա... կանչեց այդ ըուպէին  
Սօնիան, պարտիզի կողմից:

Սենք վեր ցատկեցինք երկուսով, իսկ Լօ-  
նիան իսկապէս որ վախեցած էր:

— Ամեն բան պէտք է բացւի,—ասաց նա:  
— Օհ, այդ պիծակը, իսկ ամենավատն այն է,  
որ դու ուշագնաց եղար...

— Ոչինչ էլ չի բացւի—հերքում էի ես  
եռանդով: — Զէ որ ես ոչինչ չեմ ասի:

— Եւ ոչ էլ ես: Դու նոյն իսկ չես ասի,  
որ ուշաթափւեցիր:

— Հասկանալի է:

— Նու, նու... զարմանում էր Լօնիան,—  
որովհետև, եթէ ես ուշաթափւէի, չէի կարող  
զիմանալ...

— Կապիա, Լօնիա... կանչում էր քոյրս մի

քանի տասնեակ քայլ հեռաւորութեան վրայ մեղ-  
նից,

— Կաղիա, — շշնջաց Լօնիան, դնելով մատը  
բերնին:

— Միայն մի վախենար:

Խշշացին թիերը և երեաց Սօնիան գող-  
նոցը հազին:

— Որտեղ էիր, Սօնիա, — հարցրինք երկու-  
սով:

— Ես գնացել էի գովնոցներ բերելու ինձ  
և քեզ համար, Լօնիա: Ահա վերցրու, որովհետեւ  
մոշի հատիկները հապուստի վրայ բծեր են թող-  
նում:

— Արդեօք անմիջապէս կը վերադառնանք  
տուն...

— Ոչ մի պատճառ չկայ — առարկեց Սօ-  
նիան: — Մայրիկի մօտ է այն պարոնը, իսկ օրի-  
որդ ելեմենտինան մտադրութիւն անգամ չունի  
դուրս դալու զրուցարանից: Մենք այստեղ կա-  
րող ենք նատել, նոյնիսկ մինչև երեկոյ: Բայց  
ես ուզում եմ մոշ քաղել, որովհետեւ դուք աւե-  
լի շատ էք կերել, քան ես:

Նրանք երկուն էլ սկսեցին մոշ քաղել, իսկ  
իմ ախորժակը նորից բացւեց:

Տեսնելով, որ ես հեռանում եմ, Լօնիան կան-  
չեց իմ յետեկից:

— Կաղիա, զիտե՞ս ինչի մասին եմ մտա-  
ծում...

Եւ նա սպառնաց ինձ օրօրելով մատը:

Այդ ըովէին, ես արդէն չդիտեմ, քանիե-  
րորդ անգամն երդւեցի, որ ոչ ոքի չեմ ակնար-  
կի իմ ուշագնաց լինելու մասին, և ոչ էլ այն  
ձանձի մասին: Սակայն հազիւ ես մի քանի քայլ  
արի, երբ լսեցի Լօնիայի ձայնը.

— Եթէ գու զիտենայիր, Սօնիա, այստեղ  
ինչ պատահեց... Բայց, ոչ, ես չեմ կարող քեզ  
ասել նոյնիսկ մի բառ անգամ: Չնայելով, եթէ  
խոստանաս ինձ, որ գու գաղտնիքը կը պահես...

Ես վախայ ողքան կարելի է հեռու, դէպէ  
խիտ թիերը, զգալով, որ ամաչում եմ: Նու,  
չնայելով Սօնիան ..

Այս չարաբաստիկ մոշերի մօտ մենք մօտա-  
ւորապէս մի ժամ էլ անց կացրինք: Երբ այս-  
տեղից վերադարձանք տուն, ես ընդհանուր գրու-  
թեան մէջ մեծ փոփոխութիւն նկատեցի: Սօ-  
նիան նայում էր ինձ սարսափով և հետաքրքրու-  
թեամբ: Լօնիան ինձ չէր նայում բոլորովին: Իսկ  
ես այսպէս շփոթւած էի, կարծես մի ոճիր կա-  
տարած լինէի:

Մնաք բարե ասելիս՝ Լօնիան, սրտագին  
համբուրեց Սօնիային, իսկ ինձ՝ միայն օրօրեց  
զլուխը: Ես վերցրի նրա առաջ դիմարկս, մտա-

ծելով, որ ես մի մեծ սրբկայ եմ:

Լօնիայի հեռանալուց յետոյ Սօնիան սկսեց ինձ յանդիմանութիւններ անել.

— Ինչ գեղեցիկ բաներ իմացայ ես, — ասաց նա լիջութեամբ:

— Ի՞նչ եմ արել — հարցրի ես խսկապէս շփոթւած:

— Ի՞նչապէս: Նախ՝ դու ուշաթափւել ես (ժհ, Աստւած իմ, և ես ներկայ չեի...). Նու և յետոյ այն պիծակը, կամ ճանճը... սարսափելի է... Խեղճ Լօնիա, — ամօթից ես կը մեռնէի:

— Բայց ես ինչ մեղաւոր եմ զբա մէջ — համարձակւեցի հարցներ:

— Կաղիա ջան, — սկսեց առարկել ինձ քոյրս, — իմ առաջ դու կարիք չունես արդարանալու, որովհետեւ չէ որ ես քեզ չեմ յանդիմանում ոչ մի բանի մէջ: Սակայն յամենայն դէպս...

«Սակայն, յամենայն դէպս»... ահա քեզ պատասխան: Այս «յամենայն դէպս»-ից հետևում էր, որ այս ամբողջ գործում միայն ես եմ մեղաւորը: Ճանճը՝ ոչինչ, Լօնիան, որը օգնութիւն էր բղաւում, նոյնպէս ոչինչ միայն ես, ես եմ յանցաւորը՝ նրա համար, որ վաղեցի նրան փրկելու:

Խսկապէս, բայց ինչու ուշաթափւեցի...

Ես անմիթար դրութեան մէջ էի: Հետեւել

օրը ես բոլորովին չգնացի պարտէզ, միմիայն նրա համար, որ Լօնիային չտեսնեմ, երկրորդ օրը, նա ինքը հրամայեց որ գնամ: Երբ եկայ, նա օրօրեց հեռւից ինձ իր պլուխը, և խօսում էր միայն Սօնիայի հետ, ժամանակ առ ժամանակ հպարտօրէն և տխուր նայելով ինձ, որպէս մի ոճրագործի:

Այնպիսի բոպէներ էին լինում, երբ ես մտածում էի, որ ինձ, այնուամենայնիւ, այսաեղ մի անարդարացի բան է պատահելու Սակայն յուս տով ես ազատւեցի նմանօրինակ կասկածանքներից, ինքու ինձ հաւատացնելով, որ խսկապէս ես մի սարսափելի բան եմ արել: Ես այն ժամանակ չպիտեի, որ այդ մեթօդը կանացի արամարանութեան բնորոշող յատկութիւններից մէկն է:

Մինչդեռ աղջկերը լրջացած զբոնում էին հանդարտ քայլերով, չմտածելով անդամ թոկով ցատկելու մասին, այլ միայն ինչ որ բան էին փսփսում իրար մէջ, յանկարծ Լօնիան կանդ առաւ և ասաց ցաւալի ձայնով.

— Սօնիա, զիտես, որ ես այնպիսի ախորաժակ ունեմ հապալաս ուտելու... Ես նոյնիսկ զգում եմ նրանց անուշ բուրմունքը...

— Խսկոյն կը բերեմ — արագութեամբ ասացի ես. անտառում մի տեղ զիտեմ, որտեղ նրանից շատ կայ...

— Դուք կը հոգմք այդ մասին, — հարցրեց  
Լօնիան, մելանխոլիկ կերպով նայելով ինձ գըւ-  
թիցս մինչև ոտներս:

— Ի՞նչն է խանգարում: Թող գնայ, եթէ  
շանկանում է, — խառնեց Սօնիան:

Ես աւելի արտգութեամբ հեռացայ, որով-  
հետեւ պարտիզում սկսեցի զգալ ճնշող օդի ծան-  
րքինը այդշափ գրիմասների պատճառով: Խո-  
հանոցի կողքով անցնելիս լսեցի, որ օրիորդները  
ծիծաղում են, և երբ ակամայից նայեցի տախ-  
տակէ ցանկապատի արմաքից, ես տեսայ, որ նը-  
րանք, ամենալաւ տըամագրութեան մէջ, թոկի  
վրայով ցատկուում էին: Թւում է, որ միայն  
իմ ներկայութեամբ նրանք այդպիսի հանդիսա-  
ւոր կերպարանք էին ընդունում:

Խոհանոցում գժոխային ազմուկ կար: Վալի-  
կի մայրիկը լավա և անիծում էր, իսկ պառաւ-  
Սալօմէան հայոցում էր նրան այն պատճառով,  
որ Վալիկը կոտրեց ափսէն:

— Ես ափսէն տւի նրան, — հառաջում էր  
ամաններ լւացողը, — այդ ստահակին, որ նա վ-  
ոէ, մաքրէ, իսկ նա, այդ անպատկառը, ձգեց  
յատակի վրայ ու փախաւ:

— Օ՛, եթէ այսօր քեզ չսպանեմ, թող իմ  
ձեռս ու ոտս գունդ ու կծիկ լինին...

Եւ յետոյ նա կանչեց.

— Վալիկ... այս բողէիս արի, շան լակուա.  
կաշիր կը քերթեմ, եթէ դու այս բողէիս չգաս...

Կարեկցութեան զգացմունք առաջացաւ իմ  
մէջ դէպի այդ տղան և ես ցանկացայ մի կերպով  
հաշտեցնել նրանց: Բայց մասձեցի, որ նոյն  
բանը կարող եմ անել անտառից վերադառնա-  
լուց յետոյ էլ, որովհետեւ Վալիկը, հաւանական  
է, զիշերից վաղ չի երեայ խոհանոցում, և շա-  
րունակեցի իմ ճամբան:

Ծնտառը ընկած էր կալւածից մօտ կէս ժամ-  
ւայ տարածութեան վրայ, գուցէ և մի քիչ ա-  
ւելի հեռու: Այնտեղ բուսել էին կաղնի, սոճի  
և տիփի ծառեր, իսկ ինչ վերաբերում է ելա-  
կին ու մրտենական հապալասին, այնչափ շատ  
էին, որ ինչքան ուզում ես՝ հաւաքիր: Ծայրե-  
րում հովիմները մի քիչ պակասացրել էին հա-  
տիկները, բայց խորքում, անտառում՝ հատիկնե-  
րը աւելի շատ էին, և նոքա նոյնչափ մեծ աեղ  
էին բունում գետնի վրայ, որչափ կալւածական  
բակը:

Ներս մտնելով այդ մասերը՝ ես այնչափ հա-  
տիկներ հաւաքեցի, որ լցըի նրանցով ամբողջ  
գլխարկս ու թաշկինակս, իսկ ինքս քիչ կերայ,  
որովհետեւ շտառում էի: Զնայելով այդ բանին,  
անցաւ մի ժամ, գուցէ և աւելի, մինչև որ ես  
բեռնաւորւած իմ ձեռք բերած պաշարով, սկսե-

ցի տուն վերադառնալի ես չգնացի ուզիդ, այլ մի քիչ երկարացրի ճանապարհո, որովհետև զբօսանքը անտառում գրաւում էր ինձ:

Երբ մանում ես խիտ մասերը, ծառերը կարծես ճանպայ են բանում: Բայց փորձիր առաջ զնալիս գլուխող յետ գարձնել, նոքա տալիս են իրար փոխագարձաբար իրենց ճգները ձեռների նման, ծառաբները մօտենում են ծառաբներին, յետոյ նոյնինկ նրանք սկսում են իրար կպչել, և դու մինչև անգամ չես նկատում, երբ բանեց քո ետևը բազմագունի այդ պատը, խնդը, անթափանցելի...

Այդ ժամանակ ոչինչ այնքան հեշտ չէ, որ չափ մոլորենը: Ուր որ շարժւես, ամեն տեղ միենոյնն է, ամեն տեղ էլ ծառերը հրւելով բացում են առաջդ և միտնում քո յետեղ: Սկսում ես վաղել, նրանք էլ միշտ վազում են յետելցի, միմիայն արգելելու համար քո վերադարձ: Կանգ ես առնում, նրանք էլ են կանգ առնում: և յագնած, կարծես, նրանք զովացնում են իրար հովհարով: Շարժում ես գլուխող աջ կամ ձախ կողմը, ճանապարհ վնայրելու նպատակով, և տեսնում ես, որ մի քանի ծառեր թագնուում են միւս ծառերի յետեր, կարծես կամենալով համոզել քեզ, որ իրենք քիչ տւելի շատ են, քան աւելի դու կարծում ես:

Օ՛, անտառը վտանգաւոր բան է: Այնաեղ քեզ լրտեսում է իւրաքանչիւր մի թոչուն, թէ դու ուր ես կնում: ամեն մի խոտիկ ուզում է փաթաթւել քո ոսկին, և, չկարողանալով այդ անել, գոնէ մի թեթև աղմուկով քո մասին իմացնում է միւսներին: Թւում է, թէ անտառը այնպիս է՝ կարօտում մարդկային դէմքին, որ մի անգամ նրան տեսնելով, նա գործադրում է իր բոլոր խորամանկութիւնները, յաւիտեանս նրան իր մէջ պահելու համար:

Արեգակը արդէն սկսում էր մայր մտնել, երբ ես դուրս եկայ դաշտը: Մի քանի քայլ տարածութեան վրայ ես պատահեցի վալիկին: Նա գնում էր արագութեամբ, ուղղակի դէպի անտառը, և յենում էր մի երկար փայտի վրայ:

— Ուր ես գնում,—հարցրի նրան:

Նո չփախաւ ինձնից: Նա կանգ տուաւ և, իր դեղին թաթիկով ցոյց տալով անտառը, պատասխանեց, մեղմօրէն:

— Հեռու, հեռու...

— Շուտով գիշեր կը լինի, տուն վերադարձիր:

— Բայց մայրիկը ուզում է ինձ սաստիկ ծեծել:

— Արի ինձ հետ, այն ժամանակ նա քեզ չի ծեծի:

— Օ՛, կը ծեծի...

— Նու, եկ, և դու կը տեսնես, որ նա քեզ  
ոչինչ չի անի, — ասացի ես մօտենալով նրան:

Տղան մի քիչ յետ գնաց, բայց չփախաւ.  
Թւում էր ինձ, որ նա տատանւում է:

— Նու, արի...

— Բայց վախենում եմ...

Ես նորից մօտեցայ, և նա կրկին մի քայլ  
յետ գնաց: Ցնցոտիներ հազած տղայի այս տա-  
տանումը և յետյետ գնալը ինձ անհանգստաց-  
նում էր: Այնտեղ Լօնիան սպասում էր պաղին,  
սա սակարկում է ինձ հետ իր վերադարձի մա-  
սին... Է՞հ, ես ժամանակ չունեմ դրա մասին  
մտածելու:

Սրագութեամբ շուռ եկայ և քայլերս ուղ-  
ղեցի գէպի կալւածական տները: Ես գուցէ և  
մինչև մեր տունը եղող ճանապարհի կէմն ար-  
դէն կարել էի, երբ գարձրի գլուխս ու տեսայ  
Վալիկին, որը կանդնած էր բըրի վրայ, անտա-  
ռին մօտիր: Նա կանգնած էր պահած ունենալով  
փայտը ձեռքին և նայում էր ինձ: Թամբին շար-  
ժում էր Նրա գորշ գոյնի շապիկը, իսկ կիսով  
չափ պատուած գլխարկը, մայր մանող արկի  
ճառագայթների տռի, փայլում էր նրա գլխի  
վրայ ինչպէս մի երեղէն պատկ:

Մի բան իմ ուշադրութիւնը գրաւեց:

Ես յիշեցի, ինչպէս կալւածական ծառանե-  
րը նրան յորդորում էին, որ նա վերցնի իր  
ձեռնափայտը և գնայ աշխարհը ման գալու:  
Բայց միթէ ձշմարտութիւն է... Ոչ չէ որ նա  
այդ աստիճանի անխելք չէ: Սակայն ես ժամա-  
նակ չունեմ վերադառնալ նրա մօտ, որովհետեւ  
պտուղները կը ճմւէին, իսկ այստեղ սպասում էր  
Լօնիան...

Վաղերով ես հասայ տուն և ուզում էի լց-  
նել պառողը զամբիւղի մէջ: Եկմքի վրայ Սօ-  
նիան դիմաւորեց ինձ աղխոզորմ լացով:

— Ի՞նչ է պատահել...

— Դժբախտութիւն, — շշնջաց քոյլու: — Ա-  
մեն բան բացւել է... հայրիկը իր պաշտօնը  
կորցրեց արդէն տիկնոջ մօտ:

Պտուղը գուրս թափւեց գիւարկիցս ու թաշ-  
կինակիցս և շաղեկաւ: Ես բռնեցի քըոջս ձեռքից:

— Սօնիա, ինչ է պատահել քեզ... ինչ ես  
տուամ...

— Այն, Հայրիկը արդէն զրկւեց իր պաշտօ-  
նից:

Լօնիան ծածուկ կերպով պատմեց դաս-  
տիարակչուհուն պիծակի մասին, իսկ դաստիարակ-  
չուհին էլ՝ արկնոջը...

Երբ հայրիկը եկաւ ոլազար, տիկինը հրա-  
մայեց, որ նա՝ անմիջապէս ճանպայ դնի քեզ

Դէպի Սեղեց (Siedlce): Բայց հայրիկը պատասխանեց, որ բոլորս մենք միասին կը գնանք...

Քոյրս սկսեց սաստիկ լաց լինել:

Այդ բովէին ես տեսայ հօրս բակում: Վազեցի ուղղակի դէպի նա և շնչառապո ընկայ նրա ոտները:

— Իմ սիրելի, հայրիկ,— ինչ արեցի, — շնչացի ես, գրկելով նրա ոտները:

Հայրս բարձրացրեց ինձ, օրօրեց գլուխը և առաց կարճ.

— Յիմար ես, տնւն գնա:

Եւ յետոյ աւելացրեց, կարծես ինքն իրեն.

— Այստեղ մի այլ տան տէր կայ, որը մեզ քշում է. որովհետև նա մտածում է, որ ծերացած լիազօրը թոյլ չի առաջ նրան ատրւել բախտախաղի մէջ որբուկի ամբողջ կարողութիւնը: Եւ նա իրաւացի է:

Ես գլուխի ընկայ, որ նա խօսում է մեր տիկինոջ նշանածի մասին: Հոգիս աւելի ծանրացու: Ես համբուլեցի հայրիկիս կոշտացած ձեռքը և սկսեցի խօսել մի քիչ աւելի համարձակ.

— Ահա, հայրիկ, մենք գնացինք մոշ քաղելու: Լօնիային իայթեց պիծակը...

— Յիմար ես, ինչպէս պիծակը: Մի եղբայրոցիր աղաների զաւակների հետ, այն ժամանակ դու պիծակներ չես որսայ և անդրա-

վարդիկդ էլ չես փչացնի ձկների լճակի մէջ: Գնա տուն և ոտոք շէմքից դուրս մի գնիր, մինչ չես որ նրանք բոլորն էլ կը մեկնեն:

— Կը մեկնեն... դժւարութեամբ մրմնջացի ես:

— Նոքա կը մեկնեն Վարշաւա մի քանի օրից յետոյ, իսկ երբ նրանք կը վերադառնան, մենք արդէն այստեղ չենք լինի:

Երեկոն անցաւ տիսուր: Ընթրիքի համար կաթով հրաշավի խմորագնդեր կային պատրաստած, բայց մեղնից ոչ ոք չկերաւ:

Սօնիան սրբում էր արցունքից կարմրած աչքերը, իսկ ես անիրազործելի ծրագիրներ էի կազմում:

Անկողին մանելաւց առաջ, ես կամացուկ մտայ քրոջս սենեակը:

— Աօնիա, — ասացի նրան վճռաբար, — ես... պէտք է ամուսնանամ Լօնիայի հետ...

Նա նայեց ինձ վախեցած:

— Երբ, — հարցրեց նա:

— Այդ միևնոյն է:

— Բայց այժմ տէր հայրը ձեզ չի ամուսնացնի, իսկ յետոյ էլ Լօնիան կը լինի Վարշաւայում, իսկ դու՝ Սեղլեցում... Սակայն, ինչ կառէ հայրիկը, տիկինը...

— Ես տեսնում եմ, որ դու չես ուզում

օգնել ինձ,—պատասխանեցի ես քրոջս, և առանց համբուրելու նրան «բարի գիշեր»-ի համար դուքս եկայ:

Այդ ժամանակից ես ոչինչ չեմ յիշում: Անցան օրեր ու գիշերներ, և ես միշտ պառկած էի անկողնում, որի կողքին նստած էր լինում կամ քոյրա, կամ զօյցեխովան, և կամ երբեմն խիրուրգի օգնականը: Զգիտեմ արդեօք խօսում էին ինձ մօտ, թէ ես այդպէս էր տեսնում երազիս մէջ, իբր թէ կօնիան արդէն մելինեց, և որ Վալիկը անհետացել է մի տեղ: Մի անգամ նոյն իսկ թւաց ինձ, որ ես տեսնում եմ զլիիս վերև Վալիկի մօր արցունքներով պատած գէմքը, որը աղիողորմ լացով հարցնում էր.

— Երիտասարդ պարոն, դուք մըտեղ աեսաք Վալիկին...

— Ես... Վալիկին... ես ոչինչ չէի հասկանում: Բայց յետոյ պատկերացրի, որ իբր թէ հաստապտուղներ եմ հաւաքում անտառում և որ իւրաքանչիւր՝ ծառի յետից նայում է ինձ Վալիկը: Ես կանչում եմ նրան, նա վախչում է, ես վազում եմ նրա յետից, բայց չեմ կարողանում նրան հանել: Վայրի սալորենու թվերը բոնում են ինձ և մի կողմ հրում, մաշի թփերը փաթաթւում են ոտներին, ծառերը պատում են անդադար, իսկ մամուապատ ծառալճների արան-

քով աբագութեամբ սողոսկում է տղայի շապիկը:

Երբեմն երազում էի, որ ես ինքս եմ Վալիկը, իսկ երբեմն էլ, որ Վալիկը, կօնիան և ես մի անձնաւորութիւն ենք: Այս բոլորի հետ ես տեսնում էի միշտ անտառը կամ լիտ թփուտը, միշտ սէկը ինձ օգնութիւն էր կանչում, իսկ ես չէի կարողանում շարժւել տեղիցս:

Սարսափելի է, թէ որքան ես տանջւեցի:

Երբ ես վեր կացայ անկողնից, արդէն արձակուրզների վերջն էր և պէտք էր վնալ արդէն գալրոց: Մի քանի օր էլ ես մնացի ասնը, և միայն մեկնելու նախօրեակին, երեկոյեան դէմին, մի կերպով դուրս եկայ բակը:

Պալատի պատուհանները ծածկւած էին ոլորւող վարագոյըններով: Ուրեմն նրանք իսկապէս մեկնել են... Ես գնացի խոհանոցին մօտիկ, Վալիկին տեսնելու համար: Վալիկը չկար: Նրա մասին հարցընի մի գեղջուկ աղջկայ:

— Օ՛, երիտասարդ պարոն,—պատասխանեց նա, — Վալիկը վաղմաց չկայ...

Ես վախեցայ աւելի բան հարցներ: Գնացի պարտէզը:

Աստւած իմ, ինչպէս տխուր է այստեղ...

առանց մտածելու ես թափառում էի խոնար  
ճանապարհներով, որովհետև քիչ առաջ անձրկ  
էր եկել: Խոտը գեղնել էր, լճակը աւելի էր  
ծածկւել բոյսերով, մակոյկը լիքն էր զբով:  
Գլխաւոր ծառուղիում կային մեծ-մեծ անձրե-  
ւային ճահճատեղեր, որոնց մէջ արտացոլում  
էր խաւարը: Գետինը սի էր, տերևները թառա-  
մել էին: Տիրութիւնը ճնշեց իւ հոգին, իսկ  
նրա խորքից, ժամանակ առ ժամանակ, ինչ որ  
ստւերներ էին դուրս գալիս: Ահա Յովոէլի  
ստւերը, ահա Լօնիայինը, ահա Վալիկինը:

Յանկարծ վշեց քամին, աղմկեցին ծառերի  
կտարները, և օրօրւող ճնշերից սկսեցին կա-  
թել խոշոր կաթիլներ, ինչպէս արցունքներ:  
Աստւած տեսնում էր, որ ծառերը արտասում  
են: Ես չգիտեմ, արդեօք իմ պատճառով, թէ  
իմ բարեկամներին պատճառով, այսքանը միայն  
ճիշտ է, որ նոքա արտասում էին... ինձ հետ  
միասին:

Մութ էր, երբ դուրս եկայ սլարտիզից:  
Խոհանոցում կալւածական ծառաները ընթրում  
էին: Խոհանոցի յետեր, գաշտում, ես տեսայ  
կանացի մի դէմք:


Ազօտ լոյսի տակ, որը սփռւած էր գետնին  
ամպերի պայծառ շերտից, ես ճանաչեցի աման-

ներ լւացող կնոջը: Նա նայում էր դէպի ան-  
տառը և մընջում.

— Վալիկ... Վալիկ... տնւն վերադարձիր...  
Օ՛, որքան դու վիշտ պատճառեցիր ինձ, դու,  
անպիտան, անպիտան...

Ես տուն փախայ, որովհետև ինձ թւաց, որ  
սիրսս այդ ըստէին պիտի պայթէր:





BRUNSWICK

ԳԻՒՆ Է 1 Ա. 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0322355

